Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ 2016-2017 ԹՎԱԿԱՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱԿՆԱՐԿ

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքն (այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) ընդունվել է 2016 թվականի մայիսի 25-ին, որում 2016 թվականի հուլիսի 12-ին և հոկտեմբերի 29-ին կատարվեցին փոփոխություններ և լրացումներ: Ընտրական օրենսգիրքը պարունակում է բազմաթիվ նովելներ, մի շարք իրավահարաբերություններ ենթարկվել են նոր կանոնակարգման: Հարկ է նկատել, որ Ընտրական օրենսգրքի նախագիծն անցել էր միջազգային փորձաքննություն, դրանում իրացվել են փորձագետների ներկայացրած առաջարկություններն ու կարծիքները, իսկ Եվրոպական հանձնաժողով հանուն ժողովրդավարության օրենքի միջոցով (Վենետիկի հանձնաժողով) և Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների ԵԱՀԿ գրասենյակի (ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ) 2016 թվականի հունիսի 13-ի Ընտրական օրենսգրքի վերաբերյալ համատեղ եզրակացության համաձայն (կարծիք CDL-AD(2016)019) ընտրական օրենսդրության բարեփոխումների արդյունքում ընդունված օրենսգիրքը գնահատվել է դրական:

Ընտրական օրենսգրքում ամրագրված են այնպիսի իրավակարգավորումներ, որոնք ապահովում են աննախադեպ և լիակատար թափանցիկություն ընտրական գործընթացների բոլոր փուլերի նկատմամբ: Դժվար է գտնել որևէ այլ պետություն, որտեղ միաժամանակ՝

ա) ընտրողների ռեգիստրը որոնման հնարավորությամբ մշտապես հրապարակված է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում,

բ) ընտրողների ցուցակներն ըստ ընտրական տեղամասերի ներբեռնման հնարավորությամբ հրապարակվում են համացանցում,

գ) համապետական ընտրությունների ժամանակ քվեարկության ամբողջ ընթացքը և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացը տեսանկարահանվում և հեռարձակվում է համացանցով՝ ուղիղ ժամանակային ռեժիմում,

դ) քվեակության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ազատ տեղաշարժի որևէ սահմանափակում չի կիրառվում,

ե) քվեակության սենյակում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձինք գրեթե առանց սահմանափակման իրականացնում են տեսանկարահանում և ձայնագրում,

զ) համապետական ընտրությունների ժամանակ համացանցում ներբեռնման հնարավորությամբ հրապարակվում են ընտրողների ստորագրած ցուցակները,

է) քվեարկությունից հետո ամփոփման նիստին ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց տրամադրվում են քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածքներ,

ը) համացանցում հրապարկվում են քվեարկության արդյունքներն ըստ ընտրական տեղամասերի,

թ) ընտրողների գրացումն իրականացվում է տեխնիկական սարքավորումների կիրառմամբ, որոնք բացառում են կրկնաքվեարկության ցանկացած հնարավորություն,

ժ) քվեարկության ավարտից անմիջապես հետո տեղամասային ընտրական հանձնաժողովի նիստում ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց տրամադրվում է տեղեկանք տեխնիկական սարքավորմամբ գրանցված ընտրողների մասնակցության մասին,

ժա) Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նիստերը կայքում հեռարձակվում են ուղիղ ժամանակային ռեժիմում:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է վերոհիշյալ բոլոր ինստիտուտների միաժամանակյա գործողությունը, ապահովելով ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար լիակատար վերահսկողություն և ըստ անհրաժեշտության ընձեռելով խախտված իրավունքների լիակատար պաշտպանության իրականացում:

Ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով, տարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ»:

Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովները մշտապես գործող մարմիններ են, իսկ տեղամասային ընտրական հանձնաժողովները՝ ժամանակավոր, կազմավորվում են քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 և ոչ ուշ, քան 25 օր առաջ, իսկ լիազորությունները դադարում են ընտրության ավարտից հետո՝ համապատասխան ընտրական հանձնաժողովի կողմից ընտրության արդյունքներն ամփոփվելուց 7 օր հետո:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 195-րդ հոդվածի համաձայն՝

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմված է յոթ անդամից:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահին և մյուս անդամներին Ազգային ժողովի իրավասու մշտական հանձնաժողովի առաջարկությամբ ընտրում է Ազգային ժողովը՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների առնվազն երեք հինգերորդով, վեց տարի ժամկետով: Նույն անձը չի կարող ավելի քան երկու անգամ անընդմեջ ընտրվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ, ներառյալ հանձնաժողովի նախագահ:

Ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածը սահմանում էր, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է կազմավորվի մինչև 2016 թվականի նոյեմբերի

1-ը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմավորվեց 2016 թվականի հոկտեմբերի 6-ին:

Ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Հայաստանի Հանրապետությունում կազմվում է 13 ընտրական տարածք՝ 4-ը՝ Երևանում, 9-ը՝ մարզերում: Չնայած այն հանգամանքին, որ ընտրական տարածքի ինստիտուտը գործում է միայն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ, այդուհանդերձ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների որոշման առումով էական նշանակություն են ձեռք բերում ընտրական տարածքի սահմանները, քանի որ Ընտրական օրենսգրքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր ընտրական տարածքի համար կազմավորվում է մեկ կամ մի քանի տարածքային ընտրական հանձնաժողով, որոնց ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 41-ը:

Հայաստանի Հանրապետությունում կազմավորվել է ընդհանուր թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողով՝ 10-ը՝ Երևան քաղաքում և 28-ը՝ մարզերում: Տարածքային ընտրական հանձնաժողովների քանակը որոշելիս հիմք է ընդունվել նախորդ պրակտիկայի մանրակրկիտ ուսումնասիրությունը, համայնքների աշխարագրական տեղաբաշխումը, ճանապարհային առկա հնարավորությունները, հաշվի են առնվել Ընտրական օրենսգրքի նոր կանոնակարգումները, որոնցով նոր գործառույթներ էին ավելանում տարածքային ընտրական հանձնաժողովների համար:

Հարկ է նկատել, որ համապետական և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովներն ունեն ավելի շատ կազմակերպչական գործառույթներ, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նրանք ստանձնում են նաև ընտրության արդյունքների ամփոփման գործառույթ: Ակնհայտ է, որ տարածքային ընտրական հանձնաժողովները հանդիսանում են ընտրական գործընթացի կազմակերպման կարևորագույն օղակներից:

Ընտրական օրենսգրքի 144-րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն. «Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մինչև 2016 թվականի դեկտեմբերի 1-ը սահմանում է տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքները, տարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերը և համարները: Տարածքային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքները և տարածքային ընտրական հանձնաժողովների նստավայրերը սահմանելուց հետո՝ 21-օրյա ժամկետում»:

2016 թվականի դեկտեմբերի 1-ից մինչև 12-ն ընկած ժամանակահատվածում Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ընդունվել է տարածքային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկվելու մասին թվով 319 դիմում, որից՝

Ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների

Տարածքային ընտրական հանձնաժողով N	Դիմումատուների թիվը	Կին դիմումատուների թիվը
1	7	2
2	9	5
3	9	3
4	7	3
5	8	2
6	7	4
7	7	2
8	7	2
9	7	2
10	7	3
11	8	4
12	7	3
13	12	3
14	8	4
15	8	3
16	9	3
17	9	2
18	7	2
19	7	3
20	8	2
21	7	2
22	9	3
23	8	4
24	8	3
25	7	3
26	8	3
27	7	2
28	7	3
29	7	3
30	11	4
31	9	4
32	12	4
33	15	4
34	9	2
35	8	4
36	9	2
37	9	3
38	11	4
Ընդամենը	319	114

Ըստ դիմումների քանակի՝

	Տարածքային ընտրական հանձնաժողովներ
7 դիմում	15
8 դիմում	9
9 դիմում	9
11 դիմում	2
12 դիմում	2
15 դիմում	1
Ընդամենը	**38**

Նշված թվային ցուցանիշներից ակնհայտ է, որ առկա է եղել շատ ցածր մրցակցություն, իսկ տարածքային ընտրական հանձնաժողովների մոտ 40 տոկոսում ընդհանրապես մրցակցություն չի եղել: Արդյունքում 15 տարածքային ընտրական հանձնաժողովների կազմերը ձևավորվել են ապրիորի, ևս 5 տարածքային ընտրական հանձնաժողովների կազմում կանայք նշանակվել են ապրիորի:

Բոլոր տարածքային ընտրական հանձնաժողովները կազմավորվել են սահմանված ժամկետում՝ 2016 թվականի դեկտեմբերի 16-ին:

2017 թվականին 9 տարածքային ընտրական հանձնաժողովների կազմերում տեղի են ունեցել փոփոխություններ, որոնց արդյունքում փոփոխվել են հանձնաժողովների 14 անդամներ: Մրցույթ հայտարարված 13 թափուր տեղերի համար ստացվել են 1-ական դիմումներ, իսկ մեկ դեպքում՝ 3 դիմում:

Նորմատիվ որոշումների ընդունում

Ընտրական օրենսգրքի կանոնակարգումների համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պետք է ընդուներ 70 նորմատիվ և մոտ երեք տասնյակ անհատական որոշումներ, որոնցով առավել մանրակրկիտ կանոնակարգման էին ենթարկվելու առանձին ընտրական իրավահարաբերություններ: Նկատի ունենալով ընտրական գործընթացի բոլոր մասնակիցների համար ընտրական իրավահարաբերությունների կարգավորմանն ուղղված նորմատիվ դաշտին իրազեկ լինելու հրամայականը, ինչպես նաև նոր ընտրական օրենսդրության պատշաճ և ամբողջական ուսուցման կազմակերպման անհրաժեշտությունը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովն Ընտրական օրենսգիրքն ուժի մեջ մտնելուց անմիջապես հետո, ձեռնարկել է նախատեսված ենթաօրենդրական նորմատիվ և անհատական ակտերի ընդունման գործընթացը: Հարկ է նկատել, որ Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքն ուժի մեջ է մտել 2016 թվականի հունիսի 1-ից, իսկ նոր օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սկսել է ընդունել 2016 թվականի հունիսի 17-ից և Ազգային ժողովի ընտրության նշանակման պահին (29.12.2016թ.) ենթաօրենսդրական ակտերի ավելի քան 92 տոկոսն արդեն իսկ

ընդունվել էին: Թերևս ընդունված չէին բացառապես այն որոշումները, որոնք վերաբերում էին ընտրողների գրանցման գործընթացում նոր տեխնիկական սարքավորումների կիրառմանը, ինչը պայմանավորված էր տեխնիկական սարքավորումների և դրանց ծրագրային միջոցների ձեռքբերման ժամկետներով: Ամփոփելով փաստենք, որ Ընտրական օրենսգրքով նախատեսված ընտրական գործընթացի կազմակերպմանն առնչվող բոլոր նորմատիվ և անհատական իրավական ակտերն ընդունվել են սահմանված ժամկետներում: Հանձնաժողովի ենթաօրենսդրական նորմատիվ ակտերը «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան գրանցվել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից և հրապարակվել Հայաստանի Հանրապետության նորմատիվ գերատեսչական ակտերի տեղեկագրերում: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որևէ նորմատիվ իրավական ակտ չի վիճարկվել:

Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տրվել է Ընտրական օրենսգրքի առանձին իրավանորմերի կիրառության վերաբերյալ թվով 10 պարզաբանում, ընդ որում՝ 8-ը հասարակական կազմակերպությունների դիմումներով, 2-ը սեփական նախաձեռնությամբ: Ի դեպ հատկանշական է, որ բոլոր պարզաբանումները նախապես հանդիսացել են քննարկման առարկա ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի և տեղական դիտորդական առաքելություն իրականացնող շուրջ մեկ տասնյակ հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի բոլոր որոշումները զետեղվել են հանձնաժողովի պաշտոնական կայքում, դրանք տպագրվել են առանձին ժողովածուի տեսքով և տրամադրվել ընտրական հանձնաժողովների անդամներին, ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, դիտորդական առաքելություն իրականացնող կազմակերպություն-ներին:

Մասնագիտական դասընթացների կազմակերպում

Ընտրական օրենսգրքի 41-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի կազմում կարող են ընդգրկվել ընտրական իրավունք ունեցող և ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայական ունեցող անձինք:»:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների համար կազմակերպում և անցկացնում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը՝ իր սահմանած կարգին համապատասխան: Դասընթացները կազմակերպվում են Երևանում և մարզերում տարին առնվազն մեկ անգամ՝

քաղաքացիների դիմումների, կուսակցությունների ներկայացրած ցուցակների հիման վրա: Ներկայացված ցուցակներում ընդգրկված, ինչպես նաև դիմում ներկայացրած անձինք մասնակցում են մասնագիտական դասընթացներին՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նախապես հրապարակված գրաֆիկին (օր, ժամ, վայր) համապատասխան: Նշված անձինք կարող են մասնակցել ստուգարքին՝ անկախ դասընթացին մասնակցելու հանգամանքից՝ հրապարակված գրաֆիկին համապատասխան: Որակավորման վկայականները տրվում են ստուգարքի հիման վրա: Ստուգարքն անցկացվում է համակարգչային կամ թեստային ստանդարտ եղանակով: Դասընթացների, ստուգարքի ընթացքին կարող են հետևել զանգվածային լրատվության միջոցների, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները:»:

Նշված իրավական կանոնակարգումներին համապատասխան, ինչպես նաև նկատի ունենալով այն հանգամանքը, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ առաջադրելու համար Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունները և կուսակցությունների դաշինքները կարող էին առաջադրել միայն որակավորման վկայական ունեցող քաղաքացիներին, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2016 թվականի հուլիսի 25-ից մինչև հոկտեմբերի 30-ը կազմակերպել և անցկացրել է ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ, իսկ տրամադրված նոր վկայականները գործողության մեջ էին մտնելու 2017թ. հունվարի 1-ից:

Հարկ է նկատել, որ նոր Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո մինչև 2017թ. հունվարի 1-ը պետք է անցկացվեին տեղական ինքնակառավարման մարմինների մի շարք ընտրություններ և կարևորելով Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակումներ կատարելու իրավունքի իրականացման լիակատար հնարավորության ապահովումը, ինչպես նաև տեղական հասարակական կազմակերպությունների կողմից դիտորդական առաքելություն իրականացնելու հնարավորությունների ապահովումը՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2016թ. հունիսի 13-ին ընդունեց «Ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման և դիտորդական առաքելություն իրականացնելու վկայականների վավերականության ժամկետը երկարաձգելու մասին» թիվ 18-Ա որոշումը, որով սահմանեց, որ 2011 թվականի մայիսի 26-ին ընդունված ընտրական օրենսգրքով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2011 թվականի հուլիսի 29-ի «Ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացներ կազմակերպելու, անցկացնելու և որակավորում շնորհելու կարգը, դասընթացներին մասնակցելու դիմումի, ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման և դիտորդական առաքելություն իրականացնելու վկայականների ձևերը սահմանելու մասին» N 36-Ն որոշմամբ սահմանված կարգով ստուգարքի հիման վրա Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի կողմից տրված ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման և դիտորդական առաքելություն իրականացնելու այն վկայականները, որոնց վավերականության ժամկետը լրանում է ավելի շուտ քան 2016 թվականի դեկտեմբերի 31-ը, համարել վավեր մինչև 2016 թվականի դեկտեմբերի 31-ը:

Ընտրական օրենսգրքի ընդունումից հետո առաջին դասընթացները կազմակերպվել են 2016 թվականի հուլիսի 25-ից մինչև հոկտեմբերի 30-ը, որին մասնակցելու համար կուսակցությունների և անհատ քաղաքացիների կողմից ներկայացվել էր 54.061 հայտ, որից 5374 լրացուցիչ, այսինքն՝ հենց դասընթացների անցկացման ընթացքում: Չնայած այն հանգամանքին, որ հայտեր ներկայացնելու համար սահմանված էր բավարար ժամանակ, իսկ լրացուցիչ հայտերով խիստ բարդանում է աշխատանքի պլանավորումը և դասընթացների կազմակերպումը, այդուհանդերձ որևէ լրացուցիչ հայտ չի մերժվել: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 37.525 քաղաքացիներ, որոնցից 34.754-ին (մասնակիցների 92.62%) ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:

Չնայած այն հանգամանքին, որ 2016թ. հուլիսի 25-ից - հոկտեմբերի 30-ն արդեն իսկ անցկացվել էին դասընթացներ, այդուհանդերձ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը բավարարեց Ազգային ժողովում խմբակցություն ունեցող կուսակցությունների դիմումները նոր դասընթացներ անցկացնելու վերաբերյալ, նկատի ունենալով այն հանգամանքը, որ առանձին կուսակցությունների կողմից անհնար էր նշանակումների կատարումը բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում: Տվյալ պահին առկա, մեծ աշխատանքային ծանրաբեռնվածության պայմաններում անգամ, հետագա ցանկացած շահարկում կանխելու նպատակով, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2017թ. հունվար-փետրվար ամսին, այսինքն՝ քվեարկության օրվանից մոտ երկու ամիս առաջ, կազմակերպեց և անցկացրեց նոր դասընթացներ, որին մասնակցելու համար կուսակցությունների կողմից ներկայացվել էր 4.361 հայտ, որից 149 լրացուցիչ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 2.450 քաղաքացիներ, որոնցից 2.431-ին (մասնակիցների 98.49%) ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:

2017 թվականի մասնագիտական դասընթացները կազմակերպվել և անցկացվել են սեպտեմբեր-նոյեմբեր ամիսներին, որին մասնակցելու համար կուսակցությունների և անհատ քաղաքացիների կողմից ներկայացվել էր 4.129 հայտ, որից 812 լրացուցիչ: Կազմակերպված դասընթացներին մասնակցել են 2.519 քաղաքացիներ, որոնցից 2.300-ին (մասնակիցների 91.31%) ստուգարքի արդյունքում շնորհվել են որակավորման վկայականներ:

Դասընթացների բոլոր մասնակիցները նախապես տեղեկացվել են դասընթացների անցկացման վայրի և ժամի մասին, այդ տեղեկությունները զետեղվել են նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Ստուգարքներն անցկացվել են գրավոր թեստերի միջոցով և գնահատման փուլում բացառվել է սուբյեկտիվիզմով պայմանավորված ցանկացած մոտեցում, գրավոր թեստերի հարցաշարն իր ճիշտ պատասխաններով ևս զետեղված է եղել համացանցային կայքում: Դասընթացներն անցկացվել են Երևան քաղաքում և հանրապետության բոլոր քաղաքներում: Դասընթացների կազմակերպման և անցկացման, ստուգարքի հանձնման և որակավորման վկայականներ շնորհելու գործընթացը որևէ անձի կողմից չի վիճարկվել:

Դասընթացները պատշաճ կազմակերպելու նպատակով հրատարակվել էր համապատասխան ուղեցույց և տրամադրվել դասընթացի բոլոր մասնակիցներին:

Տարածքային ընտրական հանձնաժողովների կազմավորումից անմիջապես հետո՝ ԵՄ-ի և ԵԽ-ի Արևելյան գործընկերության երկրների համար 2015-2017թթ. ծրագրային համագործակցության կառուցակարգի շրջանակներում «Երկարա-ժամկետ ընտրական աջակցություն Հայաստանում ընտրությունների հետ առնչվող շահագրգիռ կողմերին» ծրագրի աջակցությամբ, 2016 թվականի դեկտեմբեր - 2017 թվականի փետրվար ամիսներին անցակացվել է այդ հանձնաժողովների անդամների ուսուցում, որին նախորդել էր ուսուցանողների ուսուցման գործընթացը՝ միջազգային փորձագետների մասնակցությամբ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների համար կազմակերպվել և անցկացվել են լրացուցիչ ուսումնական դասընթացներ, որի շրջանակներում հանձնաժողովների անդամները, առավել խորացված, ուսուցանվել են ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի առանձնահատկությունները: Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ, տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմավորումից հետո, իրականացվել է նաև նշված հանձնաժողովների անդամների ուսուցում, որի ծրագրում ներառվել էին նաև գործնական աշխատանքներ: Նշված ուսուցման կազմակերպման համար ժամանակահատվածը խիստ սահմանափակ էր, քանզի տեղամասային ընտրական հանձնաժողովները կազմավորվում են քվեարկության օրվանից 25 օր առաջ: Կազմակերպված ուսուցման ընդհանուր տևողությունը կազմել է 19 օր, որին Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ մասնակցել են տեղամասային ընտրական հանձնաժողովների շուրջ 14.000 անդամներ, Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ շուրջ 3500 անդամներ:

Տեղամասային և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների մասնագիտական դասընթացների կազմակերպումը, դասընթացների մասնակիցների համար ուղեցույցների հրապարակումը ևս իրականացվել է ԵՄ-ի և ԵԽ-ի Արևելյան գործընկերության երկրների համար 2015-2017թթ. ծրագրային համագործակցության կառուցակարգի շրջանակներում «Երկարաժամկետ ընտրական աջակցություն Հայաստանում ընտրությունների հետ առնչվող շահագրգիռ կողմերին» ծրագրի աջակցությամբ:

ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
2016-2017թթ.

Դիմումատու	2016թ.				2017թ. Հունվար-փետրվար				2017թ. Սեպտեմբեր-նոյեմբեր			
	Ընդ.	մասն.	ստուգ.	%	Ընդ.	մասն.	ստուգ.	%	Ընդ.	մասն.	ստուգ.	%
Քաղաքացիներ	2754	1823	1716	92.82					225	161	147	96.93
Ազատություն	7	3	3	100.00								
ԲՀԿ	5764	3605	3457	95.89	767	416	400	96.15	724	369	347	94.04
Ժառանգություն	2696	1800	1721	95.61	757	273	272	99.63	0	0	0	
ԼՀԿ	36	15	15	100.00					234	92	90	97.83
ՀԱԿ	1936	1335	1274	95.43	357	210	210	100.00	0	0	0	
ՀԺԿ	367	209	197	94.26					0	0	0	
ՀԿ	0	0	0						60	34	32	94.12
ՀՀԿ	27216	17831	16079	90.17	1100	704	691	98.15	1110	569	488	85.76
ՀՄԽ	302	129	115	89.15					0	0	0	
ՀՅԴ	3320	2420	2346	96.94	503	294	290	98.64	273	161	150	93.17
ՀՎԿ	4124	2936	2801	95.40	703	379	376	99.21	0	0	0	
ՌԱԿ	9	5	5	100.00					0	0	0	
ՔՊԿ	156	54	50	92.59	25	25	25	100.00	691	326	316	96.93
Լրացուցիչ	5374	5360	4975	92.82	149	149	149	100.00	812	807	730	90.46
Ընդամենը	**54061**	**37525**	**34754**	**92.62**	**4361**	**2450**	**2413**	**98.49**	**4129**	**2519**	**2300**	**91.31**

Ընտրողների գրանցման նոր համակարգի ներդրում

2016 թվականի մայիսի 25-ին ընդունված Ընտրական օրենսգրքով ամրագրված, ի թիվս այլ փոփոխությունների քվեարկության գործընթաց ներմուծվեց տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումը տեխնիկական սարքավորման միջոցով իրականացնելու ընթացակարգը:

Տեխնիկական սարքավորման միջոցով ընտրողների գրանցման համակարգի ներդրումն իրականացվեց «Աջակցություն ընտրական գործընթացին Հայաստանում» ծրագրի աջակցությամբ: «Աջակցություն ընտրական գործընթացին Հայաստանում» ծրագիրը կյանքի կոչվեց Եվրոպական միության, ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության, Գերմանիայի Դաշնային Հանրապետության, Հայաստանի Հանրապետության և Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության ֆինանսավորմամբ և իրականացվեց Միավորված ազգերի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) գրասենյակի կողմից: Ի դեպ նույն ծրագրի ֆինանսավորմամբ իրականացվեց նաև ընտրական տեղամասերից քվեարկության ընթացքի և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացի տեսանկարահանումը և միաժամանակյա համացանցային հեռարձակումը՝ ուղիղ ժամանակային ռեժիմում, ինչպես նաև ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակման համար սքանավորող սարքերի ձեռքբերումը:

Նոր ընթացակարգերի ներդրումն ապահովելու նպատակով մշակվեցին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ընդհանուր ռազմավարական ուղղություններն ու նպատակները և սահմանվեց գործընթացի բոլոր մակարդակներում պահանջվող գործողությունների պլան ըստ ժամկետների և պատասխանատուների:

Պարբերական աշխատանքային հանդիպումներ են անցկացվել գործընկեր կազմակերպությունների հետ հաղորդակցման նախաձեռնությունները համակարգելու և դրանք Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հաստատված գործողությունների պլանի հետ համադրելու նպատակով:

Ընտրողների գրանցումն իրականացնող 4.000 հատ տեխնիկական սարքավորումները ձեռբերվեցին «Սմարթմաթիք» («Smartmatic») ընկերությունից, որն իրականացրեց դրանց մատակարարումը Հայաստան, ինչպես նաև տեխնիկական սարքավորումների տեխնիկական և ծրագրային ապահովումը և CVIS հավելվածի անխափան աշխատանքը: Միաժամանակ ձեռքբերվեցին 2.000 հատ անխափան սնուցման սարքեր (UPS) և 1.500 հատ երթուղիչներ:

Տեխնիկական սարքավորումների մատակարարումն իրականացվեց մի քանի փուլով: Առաջին սարքավորումները՝ 12 հատ, ստացվեցին 2017 թվականի հունվարի վերջին, որոնց միջոցով 2017թ. փետրվարի 12-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ՝ Սեմյոնովկա և Վարդանաշեն համայնքներում իրականացվեց տեխնիկական սարքավորումների առաջին փորձնական կիրառումը, որի նպատակն էր նաև տեխնիկական հնարավոր թերությունների բացահայտումը և չնայած խիստ կարճ ժամկետներին դրանց

լիակատար շտկումը: Փորձնական կիրառումը իրականացվեց լիակատար թափանցիկության ապահովման պայմաններում, որին ներկա գտնվեցին նաև քաղաքական կուսակցությունների, քաղաքացիական հասարակության և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Փորձնական կիրառման ժամանակ վեր հանվեցին բոլոր թերությունները, նախատեսվեց իրականացնել ծրագրային ապահովման լրամշակում, քանզի ծրագրի առաջին տարբերակը մասամբ չէր համապատասխանում Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված պահանջներին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացվեցին նաև հավելյալ պահանջներ, մասնավորապես՝

- տեխնիկական սարքավորման միջոցով տպված կտրոնը բացի Ընտրական օրենսգրքով պահանջվող տվյալներից պետք է պարունակեր նաև լրացուցիչ այլ տվյալներ՝ ընտրությունների անվանումը, ընտրությունների ամսաթիվը, ընտրական տեղամասի համարը, քվեարկության կտրոնի տպման ժամը և սարքի համարը և քվեարկության կտրոնի հերթական համարը տվյալ սարքում.

- եթե ընտրողն իր անձը հաստատող որևէ փաստաթղթով արդեն իսկ մասնակցել էր քվեարկությանը, ապա Ընտրական օրենսգրքով սահմանված՝ էկրանին հայտնվող կարմիր նշանի հետ միաժամանակ սարքավորման վրա պետք է միանար ձայնային ազդանշան, իսկ տեխնիկական սարքավորման միջոցով տպված կտրոնը «Կրկնակի գրանցման փորձ» ծանուցման հետ մեկտեղ պետք է պարուներ ընտրողի անունը, ազգանունը, լուսանկարը (էլեկտրոնային շտեմարանում դրա առկայության դեպքում), անձը հաստատող փաստաթղթի համարը, ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում հերթական համարը, ինչպես նաև այն փաստաթղթի համարը, որով անձն արդեն գրանցվել էր տվյալ տեղամասում և գրանցման ամսաթիվն ու ժամը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից նշված լրացուցիչ պահանջների առաջադրումը նպատակ էր հետապնդում ապահովելու առավելագույն թափանցիկություն և հանրային լիակատար վերահսկողություն:

Պահանջվող փոփոխություններն իրականացվեցին ամբողջ ծավալով: Փոփոխությունները կատարվել են փուլերով՝ 3 ամիսների ընթացքում, որը հնարավորություն ընձեռեց իրականացնել փուլային թեստավորում՝ ներառյալ ինտեգրացիոն և ռեգրեսիոն թեստավորումները: Վերջնական տարբերակը՝ պահանջվող բոլոր փոփոխություններով իրականացվեց սահմանված ժամկետում և հասանելի էր խորհրդարանական ընտրությունների ժամանակ:

Հավելյալ փոփոխություններ են իրականացվել նաև համապետական ընտրություններից հետո՝ ապահովելով բոլոր անհրաժեշտ ծրագրային բարելավումները մինչև «Աջակցություն Հայաստանում ընտրական գործընթացին» ծրագրի ավարտը:

Ծավալուն աշխատանք կատարվեց նաև Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից, իրականացնելով

բնակչության պետական ռեգիստրի նախապատրաստումն ընտրական գործընթացի համար: Հաջողությամբ մշակվել և կիրառվել են ընտրողների տվյալների բազայի նախապատրաստման ընթացակարգերն ու պրոցեսները, ապահովելով տվյալների նախապատրաստման պրոցեսի հրապարակայնությունը և թափանցիկությունը: Տվյալների անվտանգությունն ապահովվել է պատշաճ մակարդակով՝ տվյալների գաղտնագրման և անվտանգության սերտիֆիկատների կիրառմամբ:

Տեխնիկական սարքավորումների և ընտրողների կենտրոնական տեղեկատվական համակարգի նախապատրաստումը ևս իրականացվել է սահմանված ժամկետներում, իսկ հստակ մշակված գործընթացների արդյունքում իրականացվել են տեխնիկական սարքավորումների, երթուղիչների, անխափան սնուցման սարքերի ամբողջական ստուգումը: Անսարքություններ ունեցող սարքավորումները և մյուս սարքերը զննվել են, խնդիրները վերացվել և դրվել են գործարկման մեջ:

Ընտրական օրենսգրքի 60-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված կարգի համաձայն՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական սարքավորումների սպասարկումն ապահովելու նպատակով պայմանագրային հիմունքներով ընդգրկում է յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի հաշվարկով մինչև 4 մասնագետ: Տեխնիկական սարքավորումն սպասարկող մասնագետ կարող է լինել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված մասնագիտական գիտելիքներին ու աշխատանքային ունակություններին ներկայացվող պահանջները բավարարող, հայերենին տիրապետող 18 տարին լրացած անձը: Որպես մասնագետ կարող են ներգրավվել նաև հանրային ծառայողները:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017թ. հունվարի 11-ի N 5-Ն որոշմամբ սահմանվեց տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների ընտրության, ուսուցման և մասնագիտական գիտելիքների ու աշխատանքային ունակությունների ստուգման կարգը: Նշված կարգի համաձայն՝ դիմումները կարող էին ներկայացվել միայն առցանց՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում՝ www.elections.am, համապատասխան հղումով տեղադրված դիմումի էլեկտրոնային ձևաթուղթը լրացնելու միջոցով: Ի դեպ նման մասշտաբային ծրագրի իրականացման նպատակով առաջին անգամ կիրառվեց էլեկտրոնային եղանակով միաժամանակյա թեսթավորմամբ դիմումների ընդունման համակարգ, որի ծրագրային ապահովումը մշակվել էր Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից:

Դիմումների ներկայացման համար սահմանված ժամկետում՝ 2017թ. հունվարի 27-ից մինչև փետրվարի 5-ը ժամը՝ 18:00-ն համակարգ մուտք է գործել 15.445 անձ, որոնցից համակարգում գրանցվել էին 12.406-ը: Գրանցված 12.406 մասնագետների թեկնածուներից ընտրվեցին 6.034-ը:

Ընտրողների գրանցումը տեխնիկական սարքավորումների միջոցով իրականացնելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովը պլանավորեց

հավաքագրել և վերապատրաստել հիմնական դասընթացավարների, որոնք էլ իրենց հերթին պետք է վերապատրաստեին ընտրական տեղամասերում տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետներին: Մասնագետներին տեխնիկական սարքավորումը սպասարկելու համար անհրաժեշտ հմտություններ և գիտելիքներ փոխանցելու, ինչպես նաև մասնագետներին վկայագրելու իրավական պահանջն իրականացնելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովն անցկացրեց երկու փուլից բաղկացած կասկադային վերապատրաստման դասընթացներ:

2017 թվականի մարտի 8-10-ը կազմակերպվեց և անցկացվեց տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների ուսուցումն իրականացնող և ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների սպասարկման և մասնագետների աջակցման կենտրոնի թվով 132 քաղաքացիների ուսուցումը: Այդ ընթացում ստացվել էր ընդամենը 140 տեխնիկական սարքավորում:

Երևան քաղաքում և հանրապետության մարզերում 12 օրվա ընթացքում՝ 2017 թվականի մարտի 11-22-ը (համապետական ընտրությունների քվեարկության օրվանից մոտ 10 օր առաջ) կազմակերպվեց և անցկացվեց տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական սարքավորումները սպասարկող մասնագետների շուրջ 5.900 թեկնածուների ուսուցում և ստուգարք:

Նշված ուսուցման ընթացքում ուսուցանվել են նաև Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության համակարգի մոտ 600 ծառայողներ: Արտակարգ իրավիճակների նախարարության 12 ծառայողներ հանդիսացել են տեխնիկական սարքավորումների սպասարկման և մասնագետների աջակցման կենտրոնի անդամներ, ովքեր էլ ուսուցանել են իրենց համակարգի 600 ծառայողների: Նշված աշխատակիցների ուսուցման նպատակը համապատասխան ռեզերվ ձևավորելն էր:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ՝ 2017 թվականի մարտի 25-ին՝ ժամը 11.00-ից 15.00-ը, Երևանի Չեխովի անվան դպրոցում կազմակերպվեց տեխնիկական սարքավորումների ցուցադրում-փորձարկում:

Այս նախաձեռնությունը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ռազմավարության մի մասն էր՝ որի նպատակն էր հնարավորություն ընձեռելով տարբեր շահագրգիռ կողմերին անմիջականորեն ծանոթանալու ընտրական վարչարարության նորամուծություններին, մասնավորապես տեխնիկական սարքավորումների աշխատանքին և հնարավորություններին, ապահովելով նոր տեխնոլոգիաների և քվեարկության ընթացակարգերի նկատմամբ հանրային վստահության բարձրացումը:

Փորձարկումը ներառում էր Ընտրական օրենսգրքի դրույթներին համապատասխան տեխնիկական սարքավորումների գործարկումն ամբողջ ծավալով՝ այդ թվում տեղեկանքների տպագրություն, ընտրողների գրանցում, նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորության բացառումը և այլն:

Փորձարկմանը հրավիրված էին բոլոր քաղաքական կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների ներկայացուցիչները, որոնք մասնակցելու էին

Ազգային ժողովի ընտրություններին, կառավարության ներկայացուցիչներ, ինչպես նաև տեղական ու միջազգային դիտորդներ, քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, Միավորված ազգերի զարգացման ծրագրի (ՄԱԶԾ) ներկայացուցիչներ, Աջակցություն Հայաստանում ընտրական գործընթացին (ԱՀԸԳ) ծրագրի ներկայացուցիչները և դոնորները, «Սմարթմաթիք» ընկերության ներկայացուցիչները:

Մինչ քվեարկության փորձարկումն իրականացնելը Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել էր մամուլի հաղորդագրություն՝ նկարագրելով անցկացվելիք նախաձեռնության մանրամասները և այն կայքի տվյալները, որն ուղիղ հեռարձակմամբ ցուցադրելու էր քվեարկության փորձարկումը: Փորձարկմանը ներկա էին լրագրողներ բոլոր հայտնի հեռուստաընկերություններից, տպագիր և էլեկտրոնային լրատվամիջոցներից:

Ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից պատրաստվել և հրապարակվել են առանձին ձեռնարկ և հուշաթերթ, առանձին ձեռնարկ է պատրաստվել ու հրապարակվել տեխնիկական սարքավորումը սպասարկող մասնագետների աջակցման կենտրոնի անդամների համար: Տեխնիկական սարքավորման վերաբերյալ ձեռնարկ է պատրաստվել և հրապարակվել նաև ընտրական գործընթացի մյուս մասնակիցների՝ վստահված անձանց, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար:

Պատրաստվել և հրապարակվել է տեղեկատվական բնույթի 2 պաստառ, հանրային իրազեկման 2 տեսահոլովակ:

Նման մասշտաբային ծրագրի իրականացումը՝ թե՛ աշխատանքների իրականացման աշխարհագրության առումով, թե՛ կիրառվող սարքերի քանակով, թե՛ ծրագրի կյանքի կոչման ժամկետներով և թե՛ սարքերի կիրառման ժամկետային սահմանափակումներով՝ աննախադեպ էր:

Հանրային իրազեկում և հրապարակայնություն

Ինչպես ցույց է տալիս պրակտիկայի վերլուծությունը, երիտասարդ դեմոկրատիայի երկրներում ընտրական գործընթացներում նոր օրենսդրական լուծումների փնտրտուքը, առաջին հերթին, նպատակ է հետապնդում նպաստելու ընտրական գործընթացի բոլոր փուլերի նկատմամբ առավել թափանցիկության և լիակատար հանրային վերահսկողության հնարավորության ապահովմանը: Ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության դիֆիցիտը հնարավոր է լրացնել միայն այս գործիքակազմի լիարժեքությամբ:

Այս առումով, կարծում ենք, կարևորագույն քայլը հանրային իրազեկումն է: Երբ յուրաքանչյուր ընտրող, քաղաքական կուսակցության և քաղաքացիական հասարակության յուրաքանչյուր ներկայացուցիչ լիարժեք ծավալով իրազեկվում է

ոլորտի օրենսդրական բոլոր փոփոխություններին, միաժամանակ ստանալով պարզաբանում և բացատրություն այդ փոփոխությունների նպատակի և սպասվելիք արդյունքի վերաբերյալ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի առաջնային խնդիրներից էր հանրությանը և ընտրական գործընթացի շահագրգիռ կողմերին մանրամասն ներկայացնել ընտրական բարեփոխումներն իրացնելուն ուղղված գործողությունները, անգամ տեխնիկական լուծումները: Սա շատ կարևոր է, քանզի պասիվ ընտրական իրավունք իրացնող յուրաքանչյուր սուբյեկտ պետք է լիարժեք տեղյակ լինի իր իրավունքներին և պարտականություններին, յուրաքանչյուր ընտրող մինչև տեղամաս գալը պետք է հստակ պատկերացում ունենա քվեակարգի մասին, հանրությունը պետք է իրազեկ լինի ընտրության արդյունքների ամփոփման կարգին ու ժամկետներին, իրավունքների պաշտպանության կարգին:

Այս առումով կարևոր են ոչ միայն կլոր սեղանների, հասարակության տարբեր հատվածների հետ հանդիպումները, այլև դրանց լայն լուսաբանումը, մեծածավալ և ըստ շահառուների ուսումնադիդակտիկ նյութերի հրապարակումն ու տարածումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից հրապարակվել է 16 ուղեցույց՝ ուսումնական ձեռնարկ տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների, տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների, վստահված անձանց, դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների համար, ընտրական հանձնաժողովներում իրականացվող վարչական վարույթի մասին, նախընտրական քարոզչության ֆինանսավորման կարգի վերաբերյալ, էլեկտրոնային քվեարկության իրականացման կարգի և ժամկետների վերաբերյալ, ուղեցույց վատ տեսողության պատճառով քվեարկությանը մասնակցելու դժվարություններ ունեցող ընտրողների համար (նշված ուղեցույցը հրապարակվել է նաև բրայլյան այբուբենով), ընտրությունների անցկացման մասնագիտական դասընթացների ուղեցույց, քվեարկության արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ, տեխնիկական սարքավորումներն սպասարկող մասնագետների համար: Նշված ուղեցույցներից 3-ը հրապարակվել են նաև օտարալեզու (ռուսերեն, անգերեն) տարբերակով: Հրատարակվել է 9 տեղեկատվական բնույթի պաստառ, 6 հանրային իրազեկման հոլովակ: Առաջին անգամ հրապարակվեց քվեարկության կարգի վերաբերյալ ձեռնարկ և տեղեկատվական բնույթի պաստառ ժամկետային զինծայառողների համար, իսկ ոստիկանության կողմից հրապարակվեց ձեռնարկ տեղամասային կենտրոններում ծառայություն իրականացնող ոստիկանության ծառայողների համար: Ընտրական գործընթացի վերաբերյալ նման ծավալով ուսումնադիդակտիկ նյութեր հրապարակվել են առաջին անգամ:

Հաշվի առնելով նոր քվեակարգի առանձնահատկությունները և այն, որ նման քվեակարգ երբևէ նախկինում կիրառված չէր եղել, Կենտրոնական ընտրական

հանձնաժողովն Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ մշակեց քվեարկության կարգի երկու ուղեցույց, որոնք տպագրվեցին 300.000 տպաքանակով և տրամադրվեցին ընտրողներին՝ հանրային սննդի, առևտրի օբյեկտների միջոցով, հանրային տրանսպորտում և կամավորականների արշավի միջոցով: Հարկ է նկատել, որ բոլոր ուսումնադիդակտիկ նյութերը նախապատրաստվելուց անմիջապես հետո տեղադրվում էին նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում, դրանց մասին տրվում էին մամուլի հաղորդագրություններ: Առաջին անգամն էր, որ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից մշակված ուղեցույցները զետեղվում էին նաև ընտրությունների մասնակցող կուսակցությունների պաշտոնական կայքէջերում:

Ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին, դիտորդական առաքելություն իրականացնող միջազգային և տեղական կազմակերպություններին, հավատարմագրված զանգվածային լրատվության միջոցներին տրամադրվել են ընտրական օրենսգիրք, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշումների ժողովածու և ուղեցույցներ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ կազմակերպվել է հանդիպում հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, կազմակերպվել են բազմաթիվ ասուլիսներ, հրապարակվել են հոդվածներ և հարցազրույցներ, հեռարձակվել են հեռուստահաղորդումներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որդեգրեց նոր գործելաոճ՝ պարբերական հանդիպումներ և քննարկումներ ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների և հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Առկա չէ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված որևէ պարզաբանում, որը նախապես մանրամասն քննարկված չլիներ նշված սուբյեկտների հետ, լսված չլիներ նրանց կարծիքներն ու առաջարկությունները: Մի շարք պարզաբանումներ տրվել են համատեղ որոշված լուծումներին ու մոտեցումներին համապատասխան:

Այս ամենի արդյունավետությունը կարելի է անգամ թվերով գնահատել: Ամբողջովին փոխված, մեր իրականության մեջ երբևէ չկիրառված քվեակարգի առաջին իսկ կիրառման պայմաններում անվավեր քվեաթերթիկների թիվը մոտ 6.000 էր: 2013 թվականի մայիսի 5-ի Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ անվավեր քվեաթերթիկների թիվը 15.301 էր, իսկ 2017թ. մայիսի 14-ին ընտրությունների ժամանակ՝ 8.264:

Ազգային ժողովի և Երևանի ավագանու ընտրությունների քվեարկության օրերին Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահում կազմակերպվել են ընտրական ամբողջ գործընթացը լուսաբանող շուրջօրյա բրիֆինգներ, որին մասնակցել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամները և աշխատակազմի աշխատակիցները, ինչպես նաև ընտրական գործընթացում

առանձին գործառույթներ իրականացնող պետական այլ մարմինների ներկայացուցիչներ, Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ կազմակերպվել են տեսազանգեր տարածքային ընտրական հանձնաժողովների հետ: Նմանատիպ բրիֆինգի կազմակերպման նպատակն էր իրականացնել ընտրական գործընթացի լիակատար թափանցիկության և լուսաբանման ապահովումը:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ նման բրիֆինգներ չեն կազմակերպվել հանրային պահանջարկով պայմանավորված, սակայն քվեարկության ամբողջ օրվա ընթացքում տրվել են լիարժեք տեղեկություններ քվեարկության մասնակիցների, իսկ առանձին դեպքերում նաև պարզաբանումներ քվեարկության օրը նկատված թերությունների մասին: Հարկ է նկատել, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ քվեարկության ամբողջ օրվա ընթացքում քվեարկության մասնակիցների վերաբերյալ տեղեկություններ ներկայացնելու պահանջ օրենսդրորեն սահմանված չէ:

Ընտրական օրենսգիրքը սահմանում է այն անձանց շրջանակը, ովքեր կարող են մասնակցել Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովների նիստերին: Ընտրական հանձնաժողովների նիստերը հրավիրվել և անցկացվել են Ընտրական օրենսգրքի հիմնարար սկզբունքներին՝ (հրապարակայնություն, թափանցիկություն) համապատասխան: Բոլոր նիստերի վերաբերյալ առկա են եղել հրապարակային ծանուցումներ, նիստերն անցկացվել են բաց, առկա չէ գեթ մեկ դեպք, երբ որևէ իրավասու անձի թույլ չի տրվել մասնակցել հանձնաժողովների նիստերին: Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի էլեկտրոնային քվեարկության արդյունքների ամփոփման նիստն ուղիղ եթերով հեռարձակվել է 6 հեռուստաընկերությունների կողմից:

Ընտրությունների հրապարակայնության և թափանցիկության, ընտրական գործընթացի նկատմամբ հանրային վստահության, ընտրողների իրազեկման մակարդակի բարձրացման ապահովման ճանապարհին կարևորելով տեղեկատվության հասանելիությունը գործարկվեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքը՝ նոր լուծումներով, որում առաջնային տեղ է հատկացվում և առանձին շեշտադրվում են բոլոր նորությունները:

Կայքում զետեղվել է Ընտրական օրենսգրքով նախատեսված անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը:

Կայքում ներկայացված «Տեղեկատվական կենտրոն» նոր բաժինն ի թիվս այլ տեղեկությունների, պարունակում է ամբողջական տեղեկատվություն Կենտրոնական ընտրական հանձնաժողովում իրականացվող վարչական վարույթների մասին, իսկ «Նյութեր» բաժնում ներկայացված են Ընտրական օրենսգրքով նախատեսված և ընտրական գործընթացի համար անհրաժեշտ բոլոր ձևաթղթերի էլեկտրոնային տարբերակները՝ ներբեռնման հնարավորությամբ: Կայքում, ներբեռնման հնարավորությամբ տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի

կողմից հրապարակված բոլոր ձեռնարկներն ու ուղեցույցները: Կայքը պարունակում է տեղեկատվություն 2005 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցող բոլոր ընտրությունների վերաբերյալ: Կայքի միջոցով հնարավոր է ծանոթանալ ընտրական հանձնաժողովների տնօրինության տակ գտնվող ողջ տեղեկատվությանը, ընտրական օրենսդրությանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ընդունված իրավական ակտերին, ընտրական գործընթացներին վերաբերող միջոցառումներին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում տեղադրված է ընտրողների ռեգիստրը՝ որոնման հնարավորությամբ:

Մշակվել և ներդրվել է նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի պարզեցված տարբերակը, որը հնարավորություն է ընձեռում տեսողության հետ խնդիրներ ունեցող օգտվողներին նույնպես տեղեկատվություն ստանալ կայքից:

Իրականացվել են ծրագրային փոփոխություններ Ընտրական օրենսգրքի դրույթների պահանջներին «Ընտրություններ» ավտոմատացված համակարգը համապատասխանեցնելու նպատակով:

Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան մշակված և գործարկված ծրագրային միջոցներով ապահովվել է՝

- տարածքային ընտրական հանձնաժողովների անդամության թեկնածուների տվյալները մուտքագրելու, ըստ տարբեր տվյալների որոնելու, ֆիլտրելու, տվյալների ելքային փաստաթղթի ձևավորման (Excel-ի աղյուսակներ) և տարածքային ընտրական հանձնաժողովների անդամների տվյալները կայքում հրապարակելու հնարավորությունը,

- նախապատվության քվեակարգով քվեարկության իրականացման նպատակով էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորման, քվեարկության գաղտնիության ապահովման, նախապատվությամբ քվեարկելու, քվեարկության արդյունքներն ամփոփելու, արդյունքների ելքային փաստաթղթի ձևավորման հնարավորությունները,

- ըստ ընտրական տեղամասերի տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների և քարտուղարների պաշտոնների բաշխման իրականացումը՝ օգտագործելով պատահականության և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանված որակական չափանիշներին համապատասխան ընտրանքի հնարավորությունը.

- վարչական վարույթներով ծանուցումների կազմակերպումը:

Համապետական ընտրության ժամանակ արտերկրից առցանց քվեարկության նպատակով նախագծվել, մշակվել և ներդրվել է էլեկտրոնային եղանակով քվեարկության համակարգը, որն իր մեջ ընդգրկում է կոդավորման միջոցները, էլեկտրոնային քվեաթերթիկի ձևավորումը, օգտվողների (առցանց քվեարկելու

իրավունք ունեցողների) գրանցումը, գրանցված օգտվողների կողմից սեփական կոդերի ներմուծումը, նրանց կողմից էլեկտրոնային քվեարկության իրականացումը, քվեարկության գաղտնիության ապահովումը, քվեարկության արդյունքների ամփոփումը, ելքային փաստաթղթի ձևավորումը, արդյունքների հրապարակման հնարավորությունը:

Նախագծվել, մշակվել և ներդրվել են քվեարկության օրը տարածքային ընտրական հանձնաժողովներից էլեկտրոնային եղանակով ստացված տվյալների առցանց հրապարակման հնարավորություններ՝ գրաֆիկական և ըստ տեղամասերի աղյուսակավորման տեսքով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տեղեկատվական կենտրոնում և համացանցային կայքում, ինչպես նաև այդ տվյալները հեռուստաընկերություններին անմիջականորեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի ցանցից փոխանցման ծրագրա-տեխնիկական միջոցներ:

Նկարագրված համակարգչային ցանցը և նրանում ընդգրկված ծրագրա-տեխնիկական միջոցները փորձարկվել են՝ անվտանգության, անխափանության, իրեն վերագրված գործառույթների ճիշտ և ժամանակին իրականացման առումներով, այնուհետև դրվել շահագործման:

Ներդրվեց նոր ծրագրային հնարավորություն, որը հնարավորություն է տալիս ամբողջությամբ վերծանելու և վերլուծելու տեխնիկական սարքավորումներում առկա տեղեկատվությունը, այդ տեղեկությունները ներբեռնելու տարածքային ընտրական հանձնաժողովների համակարգիչներ և դրանք էլեկտրոնային եղանակով փոխանցելու Կենտրոնական ընտրական հանձնաժողով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքից հնարավոր դարձավ հետևել տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների առցանց հեռարձակմանը Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ ավելի քան 1500 տեղամասերից, իսկ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ՝ Երևան քաղաքի բոլոր՝ 474 տեղամասերից:

2017թ. կայացած ընտրությունների լուսաբանումը զանգվածային լրատվության միջոցներով

Լրատվական գործունեություն իրականացնող իրավաբանական անձի կամ անհատ ձեռնարկատեր հանդիսացող ֆիզիկական անձի ներկայացուցիչները քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում կարող են իրականացնել Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո: Լրատվական գործունեություն իրականացնողը կարող է հավատարմագրել իր ներկայացուցիչներին, եթե առնվազն մեկ տարի իր անունից տարածում է լրատվության միջոց: Մեկ տարվա սահմանափակումը կիրառելի չէ, եթե լրատվական գործունեություն իրականացնողը լրատվության միջոց է տարածում վերգետնյա եթերային հեռարձակմամբ:

- Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեությունը լուսաբանելու նպատակով՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում կարող են հավատարմագրվել յուրաքանչյուր լրատվության միջոցը ներկայացնող ոչ ավելի, քան 2 լրագրող և 2 լուսանկարիչ կամ տեսաձայնագրման 2 օպերատոր:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի գործունեությունը լուսաբանելու նպատակով 2017 թվականին հավատարմագրվել են թվով 38 զանգվածային լրատվության միջոցների 127 ներկայացուցիչներ:

2017 թվականի ընտրությունների ժամանակ քվեարկության օրը ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու նպատակով Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվել են՝

Ընտրության անվանումը	ՁԼՄ-ների ընդհանուր թիվը	Հեռուստաընկերություններ	Ռադիոընկերություններ	Լրատվական կայքեր	Տպագիր մամուլ	Ներկայացուցիչներ
Ազգային ժողով	**89**	24	5	47	13	**1 244**
Երևանի ավագանի	**32**	10	3	13	6	**436**
Փետրվարի 12-ի ՏԻՄ	**-**	-	-	-	-	**-**
Հունիսի 18-ի ՏԻՄ	**3**	1	1	1	0	**58**
Նոյեմբերի 5-ի ՏԻՄ	**24**	9	3	9	3	**275**

Ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված հավատարմագրման թվով 148 դիմումներից մերժվել են 2 դիմում:

2017 թվականին կայացած ընտրությունների ժամանակ չեն գրանցվել ընտրական հանձնաժողովների կողմից, հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ, հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցչներին հեռացնելու դեպքեր:

2017 թվականին կայացած ընտրությունների ժամանակ հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ, չի սահմանվել զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվ և տեղամասային կենտրոնում միաժամանակ ներկա գտնվելու առումով թվային որևէ սահմանափակում չի կիրառվել:


Հեռուստաընկերություններ
Ռադիոընկերություններ
Լրատվական կայքեր
Տպագիր մամուլ
50
45
40
35
30
25
20
15
10
5
0
24
5
47
13
10
3
13
6
1
1
1
9
3
9
3
Ազգային ժողով
Երևանի ավագանի
ՏԻՄ հունիսի 18
ՏԻՄ նոյեմբերի 5


2017 թ. ընտրությունները լուսաբանել են օտարերկրյա 34 ԶԼՄ
3
31
ՀՀ ԱԺ ընտրություններ
Երևանի ավագանու ընտրություններ

2017թ. Կայացած ընտրություններին դիտորդական առաքելությունների և այցելուների մասնակցությունը

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1) միջազգային կազմակերպությունները և օտարերկրյա այն հասարակական կազմակերպությունները, որոնց կանոնադրական նպատակները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր: Նշված կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հրավերի առկայության դեպքում, որն ուղարկելու իրավունք ունեն՝ Հանրապետության նախագահը, Ազգային ժողովի նախագահը, վարչապետը և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

2) Հայաստանի Հանրապետության այն հասարակական կազմակերպություն-ները, որոնց կանոնադրական նպատակներն ընտրությունները նշանակելու օրվան նախորդող նվազագույնը մեկ տարի ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուներին կամ ընտրություններին մասնակցող կուսակցություններին:

Հրավերի առկայության դեպքում ընտրությունների ժամանակ այցելուի կարգավիճակով ընտրական գործընթացի դիտարկում իրականացնելու իրավունք ունեն Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ներկայացուցիչները (հրավերն ուղարկում է ՀՀ ԱԳՆ) և այլ պետությունների ընտրական մարմինների ներկայացուցիչները (հրավերն ուղարկում է ԿԸՀ նախագահը):

2017 թվականի Ազգային ժողովի ընտրություններն այցելուի կարգավիճակով դիտարկել են 13 երկրների թվով 69 այցելուներ, որոնցից 40-ը՝ դիվանագիտական ներկայացուցիչներ, 29-ը՝ օտարերկրյա ընտրական մարմինների ներկայացուցիչներ:

	ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ		
	Ազգային ժողովի ընտրություններ	Երևանի ավագանու ընտրություններ	ՏԻՄ ընտրություններ
ԱՅՑԵԼՈՒՆԵՐ	69	0	0

Ընտրություններին դիտորդական առաքելություն իրականացնելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողով ներկայացված թվով 85 հավատարմագրման մասին դիմումներից հանձնաժողովը մերժել է 2 դիմում:

2017 թվականին կայացած ընտրությունների ժամանակ չեն գրանցվել ընտրական հանձնաժողովների կողմից, հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ, հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից դիտորդին հեռացնելու կամ նվազագույն թվի սահմանափակման դեպքեր:

Ընտրության անվանումը	ՀԿ-ների ընդհանուր թիվը	Միջազգային կազմակերպու-թյուններ	Տեղական ՀԿ-ներ	Դիտորդների ընդհանուր թիվը
Ազգային ժողովի	**55**	6	49	**28661 (640՝ միջազգային)**
Երևանի ավագանի	**18**	1	17	**5150 (12-ը՝ միջազգային)**
Փետրվարի 12-ի ՏԻՄ	**6**	0	6	**23**
Հունիսի 18-ի ՏԻՄ	**0**	0	0	**0**
Նոյեմբերի 5-ի ՏԻՄ	**11**	0	11	**1017**



2017թ. ընտրությունները դիտարկել են 6 միջազգային կազմակերպությունների կողմից հավատարմագրված 640 դիտորդներ

Ազգային Ժողովի ընտրություններ, 2017



Երևանի ավագանու ընտրություններ, 2017



ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՆՑԿԱՑՈՒՄ

2017 թվականին կազմակերպվել և անցկացվել են Ազգային ժողովի, Երևանի ավագանու և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 2-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ազգային ժողովի ընտրություններն անցկացվել են 2017 թվականի ապրիլի 2-ին՝ Ընտրական օրենսգրքի 103-րդ հոդվածի 1-ին մասում նախատեսված ժամկետում:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների նախապատրաստումն ու կազմակերպումն իրականացվել է Ընտրական օրենսգիրք սահմանադրական օրենքի պահանջներին համապատասխան:

Ընտրական օրենսգրքի 78-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան Հայաստանի Հանրապետությունում կազմվել է 13 ընտրական տարածք՝ 4-ը Երևանում, 9-ը մարզերում:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների ժամանակ ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2009 ընտրական տեղամաս:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով հավատարմագրվել և Ազգային ժողովի ընտրությունների նախապատրաստման, անցկացման, արդյունքների ամփոփման ընթացքում դիտորդական առաքելություն են իրականացրել 6 միջազգային կազմակերպությունների ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ (Ժողովրդավարական հաստատությունների և մարդու իրավունքների գրասենյակ), ԵԽԽՎ (Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողով), ԵԱՀԿ Խորհրդարանական վեհաժողովի, Եվրոպական խորհրդարանի, ԱՊՀ դիտորդական առաքելության և ԱՊՀ Միջխորհրդարանական վեհաժողովի ընդհանուր թվով 640 դիտորդներ, ինչպես նաև 49 տեղական հասարակական կազմակերպությունների՝ 28.021 դիտորդներ, տեղական 89 զանգվածային լրատվության միջոցի 1244 ներկայացուցիչ, և 31 օտարերկրյա զանգվածային լրատվության միջոցի 80 ներկայացուցիչ: Այցելուի կարգավիճակով տեղամասային ընտրական հանձնաժողովներ են այցելել և հետևել քվեարկության և քվեարկության արդյունքների ամփոփման գործընթացին Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների 40 և այլ պետությունների Կենտրոնական ընտրական հանձնաժողովների 29 ներկայացուցիչներ:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված են եղել ընդհանուր թվով 16.072 քաղաքացիներ, իսկ ընդհանուր թվով 4000 քաղաքացիներ մասնագետի կարգավիճակով իրականացրել են ընտրողների գրանցումն իրականացնող տեխնիկական սարքավորումների աշխատանքի կազմակերպումը:

Ազգային ժողովի հերթական ընտրության քվեարկությունը տեղի է ունեցել 2017 թվականի ապրիլի 2-ին, իսկ էլեկտրոնային եղանակով արտերկրից իրականացվող քվեարկությունը կազմակերպվել է 2017 թվականի մարտի 24-ից Երևանի ժամանակով 08:00-ից մինչև մարտի 26-ը ժամը 20:00-ն: Էլեկտրոնային եղանակով քվեարկելու իրավունք ունեցող 877 քաղաքացիներից էլեկտրոնային եղանակով քվեարկությանը մասնակցել է 747-ը:

Ազգային ժողովի հերթական ընտրության քվեարկության նախնական արդյունքները հրապարակվել են 2017 թվականի ապրիլի 3-ին, իսկ վերջնական արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է՝ 2017 թվականի ապրիլի 9-ին:

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 2017

Տեղեկատվություն
տեղամասային ընտրական հանձնաժողովներում նշանակված անդամների վերաբերյալ

	Նախագահ			Քարտուղար			Անդամ		
	ըստ բաշխման	*ըստ հայտի*	*որից՝ նշանակվել է ՏԸՀ նախագահի կողմից*	*ըստ բաշխման*	*ըստ հայտի*	*որից՝ նշանակվել է ՏԸՀ նախագահի կողմից*	*ըստ բաշխման*	*ըստ հայտի*	*որից՝ նշանակվել է ՏԸՀ նախագահի կողմից*
ՀՀԿ	893	893	6	893	893	3	223	223	1
ԲՀԿ	625	625		625	625		759	759	
ՀԱԿ	156	152	3	156	152	4	1697	1580	115
ՀՅԴ	112	112		112	112		1785	1785	4
Ժառանգ.	111	111		111	111		1787	1787	2
ՕԵԿ	112	112		112	112		1785	1785	
Ընդամենը	2009	2005	9	2009	2005	7	8036	7919	122

ՏԵՂԱՄԱՍԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱԶՄԵՐՈՒՄ ԻՆՔՆԱԲԱՑԱՐԿՆԵՐԸ

Նշանակված է	Ընդհանուր	Նախագահ	Քարտուղար
Տարածքային ընտրական հանձնաժողով	540	0	0
ՀՀԿ	106	44	46
ԲՀԿ	191	47	55
ՀՅԴ	114	4	8
ՕԵԿ	218	12	10
ԺԱՌԱՆԳ.	119	5	2
ՀԱԿ	125	3	9
ԸՆԴԱՄԵՆԸ	1413	115	130





Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին առաջադրվել էին 5 կուսակցություն և կուսակցությունների 4 դաշինք: Ընտրություններին առաջադրված 5 կուսակցությունները և կուսակցությունների 4 դաշինքը գրանցվել են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 1.538 թեկնածուներից մերժվել է միայն երկու թեկնածուի գրանցում, բացառապես գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու պատճառաբանությամբ:

Ընտրական օրենսգրքի 83-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Համապետական ընտրական ցուցակը կարող է ունենալ երկրորդ մաս, որում, սույն հոդվածի 6-րդ մասին համապատասխան, կարող են ընդգրկվել ընտրություններին նախորդող վերջին մարդահամարի տվյալներով առավել մեծ թվով մշտական բնակչություն ունեցող առաջին չորս ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ»:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին մասնակցող երկու կուսակցության (Հայկական վերածնունդ կուսակցություն, Հայաստանի Հանրապետական կուսակցություն) և կուսակցությունների երկու դաշինքի (Ծառուկյան կուսակցությունների դաշինք, Կոնգրես-ՀԺԿ կուսակցությունների դաշինք) ընտրական ցուցակներն են ունեցել երկրորդ մասեր, որոնցում ընդգրկված են եղել 27 թեկնածուներ:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) համապետական ընտրական ցուցակներում ընդգրկված 1538 թեկնածուներից 1186 ընդգրկված են եղել նաև տարածքային ընտրական ցուցակներում:

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների թեկնածուների և ինքնաբացարկների վերաբերյալ

	23.03.17թ. դրությամբ						29.05.17թ. դրությամբ	
	Համա-պետ. I	*որից՝ տարածքային ցուցակներում*	Համա-պետ. II	Մերժում	Ինքնա-բացարկ	*որից՝ տարածքային ցուցակներից*	Ինքնաբա-ցարկ	*որից՝ տարածքային ցուցակներից*
«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	**121**	***115***	0		**7**	*7*	**7**	*7*
«ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**101**	***88***	0		**1**	*1*	**1**	*1*
«ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**300**	***164***	3		**15**	*5*	**15**	*5*
«ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	**188**	***134***	3		**1**	*0*	**12**	*9*
ԿՈՆԳՐԵՍ – ՀԺԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	**139**	***126***	5		**7**	*7*	**7**	*7*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**197**	***133***	16		**1**	*1*	**10**	*6*
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**173**	***145***	0		**10**	*8*	**10**	*8*
«ՕՀԱՆՅԱՆ-ՐԱՖՖԻ-ՕՍԿԱՆՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	**148**	***128***	0	2	**8**	*7*	**10**	*7*
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	**171**	***153***	0				**3**	*1*
ԸՆԴԱՄԵՆԸ	**1538**	***1186***	**27**	**2**	**50**	***36***	**75**	***51***

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների տարածքային թեկնածուների վերաբերյալ՝ ըստ ընտրական տարածքների՝ 23.03.17թ. դրությամբ

	ԸՆՏՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔ												
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	10	14	8	6	6	7	7	5	15	8	7	10	5
«ԱԶԱՏ ԴԵՄՈԿՐԱՏՆԵՐ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	6	7	9	8	7	6	6	5	7	6	6	7	7
«ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12	14	13	13	14	15	7	12	15	12	15	10	7
«ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	13	11	7	12	11	8	7	8	12	14	14	10	7
ԿՈՆԳՐԵՍ – ՀԺԿ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	5	11	11	13	10	9	6	8	10	9	10	10	7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	12	13	11	12	13	8	7	11	7	10	13	8	7
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	13	12	14	9	7	12	6	12	9	14	15	7	7
«ՕՀԱՆՅԱՆ-ՐԱՖՖԻ-ՕՍԿԱՆՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	9	10	8	13	4	11	5	10	10	15	11	8	7
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	10	12	13	12	14	15	7	12	11	15	15	10	7
Ընդամենը	90	104	94	98	86	91	58	83	96	103	106	80	61



Տեղեկատվություն թեկնածուների վերաբերյալ ըստ սեռի

	տղամարդ	որից՝ ընտրված	կին	որից՝ ընտրված
ԵԼՔ	78	7	36	2
ԱԴԿ	62	0	38	0
ՀՎԿ	208	0	80	0
Ծառուկյան դաշինք	123	23	52	8
Կոնգրես-ՀԺԿ	92	0	45	0
ՀՀԿ	142	50	61	8
ՀԿԿ	120	0	43	0
ՕՐՕ դաշինք	99	0	39	0
ՀՅԴ	120	6	48	1
Ընդամենը	**1044**	**86**	**442**	**19**





Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

Ընտրական օրենսգրքի 19-րդ հոդվածի համաձայն՝ նախընտրական քարոզչության ժամանակահատվածը սկսվում է կուսակցությունների ընտրական ցուցակների գրանցման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետի վերջին օրվան հաջորդող 7-րդ օրը և ավարտվում քվեարկության օրվանից մեկ օր առաջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- նախընտրական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (ընդհանուր թիվը 784, այդ թվում՝ 23-ը Երևանում).
- քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված անվճար տեղերի ցանկը (ընդհանուր թվով 827, այդ թվում՝ 224-ը Երևանում).
- հեռուստառադիոընկերությունների կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

Ըստ նախապես ներկայացված հայտերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրել է հինգ քառակուսի մետրը գերազանցող արտաքին գովազդային վահանակների բաշխումը ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների միջև:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը:

Նախընտրական քարոզչության համար Ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարված են եղել մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Նախընտրական քարոզչությունն ընթացել է ակտիվ, մրցակցային: Նախընտրական հավաքների, խոսքի և տեղաշարժվելու ազատության սահմանափակումներ չեն արձանագրվել:

Ընտրական օրենսգրքի 20-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը հաստատել և հրապարակել է վերգետնյա եթերային հեռարձակում իրականացնող հեռուստաընկերությունների, ռադիոընկերությունների կողմից նախընտրական քարոզչության ժամանակահատվածում ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների համար հավասար պայմանների ապահովման գնահատման մեթոդաբանությունը:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ավելի քան 5280 եթերաժամ, որից 3720 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում, իսկ 1560 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում: Հանձնաժողովն ուղղակի մշտադիտարկումը (այդ թվում՝ գործուղումների միջոցով) իրականացրել է հեռուստառադիոընկերությունների վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման խախտումներ չեն արձանագրվել:

2017թ. մարտի 5-ից մինչև ապրիլի 2-ը ընկած ժամանակահատվածում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն ընտրություններին մասնակցող կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից ստացել է մեկ բողոք, ինչի հետ կապված հարուցվել է վարչական վարույթ, որը կարճվել է: Պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից զանգվածային լրատվության միջոցներով իրականացվող նախընտրական քարոզչությանը վերաբերող այլ դիմում-բողոքներ չեն ստացվել:

Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների նախընտրական քարոզչության (05.03.17-31.03.17թթ.), ինչպես նաև քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը մինչև ժամը 20.00-ն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն իրականացրած ուսումնասիրության և վերլուծության արդյունքում հանգել է եզրակացության, որ հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների կողմից հատկացված եթերաժամանակը բավարարել է նախընտրական ծրագրերի ներկայացման, տեսակետների և դիրքորոշումների արտահայտման համար: Լրատվական թողարկումներով ընտրողների համար համակողմանի լուսաբանվել են նախընտրական քարոզարշավի միջոցառումները:

Այնուհանդերձ, եղել են եթերաժամանակի տրամադրման անհամաչափության առանձին դեպքեր: Նշվածը մասամբ պայմանավորված է թեկնածուների կողմից իրենց նախընտրական քարոզչության պլանավորման և իրականացման՝ միջոցառումների քանակական, տարածքային և ժամանակացուցային բաշխման անհամապատասխանությամբ, քարոզչության իրականացման, ինչպես նաև նրանց նախընտրական հիմնադրամներում առկա միջոցների, անվճար և վճարովի

եթերաժամանակի օգտագործման, հեռուստառադիոծրագրերում հյուրընկալվելու պատրաստակամության առանձնահատկություններով, որը դրսևորվել է որպես օրինաչափություն բոլոր հեռուստառադիոընկերությունների եթերում:

Ազգային ժողովի ընտրությունների նախընտրական քարոզչության ֆինանսավորման նկատմամբ վերահսկողությունն իրականացրել է Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը:

Ազգային ժողովի ընտրություններում գրանցված 5 կուսակցությունները և կուսակցությունների 4 դաշինքները սահմանված կարգով բացել են նախընտրական հիմնադրամներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, ինչպես և պահանջվում է Ընտրական օրենսգրքի 28-րդ հոդվածի 1-ին մասով, նախընտրական քարոզչությունն սկսվելուց հետո՝ 10-րդ և 20-րդ օրը, ինչպես նաև ընտրությունների արդյունքների ամփոփման համար Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետից ոչ ուշ, քան 3 օր առաջ կուսակցություններից և կուսակցությունների դաշինքներից ստացել է իրենց նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերում ամրագրված ծախսերը հիմնավորող փաստաթղթերը (պայմանագրեր, վճարման հանձնարարագրեր, հաշիվ ապրանքագրեր և այլ ֆինանսական փաստաթղթեր): Միաժամանակ, վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և հիմնադրամներից կատարված ծախսերի վերաբերյալ, երեք աշխատանքային օրը մեկ, տեղեկանքներ է ստացել Կենտրոնական բանկից, որտեղ բացված են եղել նախընտրական հիմնադրամներ:

Ուսումնասիրելով նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը և հայտարարագրերին կից փաստաթղթերը, դրանց տվյալները համադրելով Կենտրոնական բանկից ստացած տեղեկատվության հետ՝ վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը կազմել է ամփոփ տեղեկանք և հայտարարագրերը ստանալուց հետո եռօրյա ժամկետում ներկայացրել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին, որը հրապարակվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում:

Վերահսկողական այս գործառույթն իրականացվել է հրապարակայնության և թափանցիկության պայմաններում: Բացի այն, որ կուսակցությունների և կուսակցությունների դաշինքների նախընտրական հիմնադրամներ կատարված մուծումների և դրանց օգտագործման վերաբերյալ հայտարարագրերը, բանկից ստացած տեղեկանքները և վերջիններիս ուսումնասիրության արդյունքում վերահսկիչ-վերստուգիչ ծառայության կողմից կազմած ամփոփ տեղեկանքը հրապարակվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային

կայքում, այդ գործընթացի նկատմամբ անմիջական վերահսկողություն իրականացնելու հնարավորություն են ունեցել Ազգային ժողովում գործող խմբակցությունների կողմից նշանակված աուդիտորի որակավորում ունեցող մեկական աուդիտորներ: Պետք է նշել, որ բոլոր խմբակցությունները օգտվել են Ընտրական օրենսգրքի ընձեռած այդ հնարավորությունից:

Նախընտրական քարոզչության ընթացքում արձանագրված առանձին խախտումները վերաբերել են արգելված վայրերում քարոզչական պաստառներ փակցնելուն, բարեգործության առանձին դեպքերի կամ այլ մասնավոր դեպքերի, որը որևէ ազդեցություն չի ունեցել ընտրության արդյունքի վրա: Նշված դեպքերի վերաբերյալ ներկայացված դիմումները, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցներով ներկայացվող հաղորդումները կամ տեղեկությունները հանդիսացել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի և տարածքային ընտրական հանձնաժողովների ուսումնասիրման և քննարկման առարկա, այդ կապակցությամբ ընդունվել են որոշումներ, որոնցով պարտավորեցվել են իրավասու սուբյեկտներին վերացնել խախտումներն ու թերությունները, ինչն էլ կատարվել է համապատասխան սուբյեկտների կողմից:

Քվեարկություն

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների անցկացման նպատակով հանրապետության տարածքում կազմավորվել է թվով 2009 ընտրական տեղամաս, որից 12-ը քրեակատարողական հիմնարկներում:

Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին 1997 տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են տեղամասային կենտրոններն ու սկսվել է քվեարկությունը: Քրեակատարողական հիմնարկներում կազմավորված տեղամասային կենտրոններից մեկը բացվել է առավոտյան ժամը 11.00-ին, մյուսը՝ 12.00-ին, իսկ մնացած 10 տեղամասային կենտրոնները բացվել են ժամը 14.00-ին:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ընդգրկված թվով 16.072 անդամներից և որպես մասնագետ ներգրավված 4000 քաղաքացիներից քվեարկության օրը բացակայել են տեղամասային ընտրական հանձնաժողովի 14 անդամներ:

Ընտրական օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն.

«Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամների և քվեարկությանը ներկա գտնվելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ մասնագետը Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ստուգում է տեխնիկական սարքավորումների աշխատանքը, մուտքագրում է ընտրական տեղամասի նույնականացման տվյալները և տպում է տվյալ տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող

տեղեկանք: Տեղեկանքը սոսնձվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում»:

Ընդհանուր թվով 4000 տեխնիկական սարքավորումներից մոտ 73-ը տեխնիկական պատճառներով պայմանավորված չեն տպել նշված տեղեկանքը: Հարկ է նկատել, որ ընդամենը 1 տեղամասային ընտրական հանձնաժողովում, որտեղ եղել է մեկ տեխնիկական սարքավորում նշված տեղեկանքն ընդհանրապես չի տպվել, քանզի մյուս դեպքերում տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ, որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, և գրանցված ընտրողների բացակայությունը հավաստող տեղեկանքները տպվել են մյուս տեխնիկական սարքավորումների միջոցով:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ ընտրական տարածքների, մարզկենտրոնների և ընտրական տարածքի՝ 10 000-ից ավելի ընտրող ունեցող համայնքների և Երևան քաղաքի հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկությունն անցել է հանգիստ և խաղաղ մթնոլորտում:

Քվեարկության օրը հանրապետության 2009 ընտրական տեղամասերում միասին վերցրած ընտրական գործընթացին հետևել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների թվով 22.416 վստահված անձ, ընտրական տեղամասեր են այցելել ընդհանուր թվով 28.704 միջազգային և տեղական դիտորդներ, այցելուներ, ինչպես նաև զանգվածային լրատվության միջոցների 1244 ներկայացուցիչներ: 2009 ընտրական տեղամասերից 1953 տեղամասերում արդյունքների ամփոփմանը հետևել են ընդհանուր թվով 28.365 դիտորդներ, այցելուներ ու զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներ: Քվեարկությանը մասնակցած 1.575.786 քաղաքացիներից օգնողների օգնությամբ է մասնակցել քվեարկությանը 70.285 (4.5%) ընտրող:

Ընտրական օրենսգիրքը սահմանել էր երկու նոր կանոնակարգումներ, համաձայն որոնց դիտորդի կողմից որևէ թեկնածուի, ընտրություններին մասնակցող որևէ կուսակցության աջակցելու, ինչպես նաև դիտորդի և զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցչի կողմից ընտրական օրենսգրքի պահանջներն այն եղանակով խախտելու դեպքում, որն էապես խաթարում է ընտրական հանձնաժողովի բնականոն աշխատանքը կամ քվեարկության բնականոն ընթացքը, ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է դիտորդին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների

առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ (հոդված 31, մաս 5, 8): Ընտրական հանձնաժողովի նախագահը կարող է վստահված անձին հեռացնել հանձնաժողովի նիստից, իսկ քվեարկության օրը՝ տեղամասային կենտրոնից՝ ընտրական հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ (հոդված 34, մաս 4): Եթե քվեարկության սենյակում գտնվող դիտորդների, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների թիվն այնքան է, որ ակնհայտորեն խաթարում է քվեարկության բնականոն ընթացքը, ապա տեղամասային ընտրական հանձնաժողովն իրավասու է հանձնաժողովի անդամների ընդհանուր թվի ձայների առնվազն 2/3-ով ընդունված որոշմամբ սահմանելու քվեարկության սենյակում միաժամանակյա գտնվելու իրավունք ունեցող դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը (հոդված 65, մաս 7):

Նշված իրավադրույթները մինչև կիրառումը բազմիցս քննարկման առարկա են հանդիսացել և ներկայացվում էին տարբեր մտահոգություններ, որ այս իրավանորմերը կարող են ծառայել գործիք դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին և վստահված անձանց ընտրական գործընթացներից մեկուսացնելու համար: Հաճախ ներկայացվում էին անգամ իմպերատիվ դատողություններ ու կանխատեսումներ այդ նորմերի կիրառման վերաբերյալ: Հարկ է նկատել, որ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների ժամանակ 2009 տեղամասային ընտրական հանձնաժողովներից և որևէ մեկի կողմից այս իրավանորմերը չեն կիրառվել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և տարածքային ընտրական հանձնաժողովներում վստահված անձանց իրավունքների իրականացմանը խոչընդոտելու կամ վերջիններիս լիազորությունները սահմանափակելու վերաբերյալ դիմումներ չեն ստացվել: Քվեարկության օրը եղել են մի քանի ահազանգեր, որոնք ստուգման արդյունքում հերքվել են: Վստահված անձանց կողմից տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում գրառում կատարելն արգելելու մասին ևս որևէ բողոք տարածքային ընտրական հանձնաժողովները չեն ստացել: Գործնականում, սակայն չի բացառվում, որ տեղամասային ընտրական հանձնաժողովներում, հանձնաժողովների անդամների և վստահված անձանց միջև եղած լինեն տարաձայնություններ, կոնֆլիկտային իրավիճակներ՝ Ընտրական օրենսգրքի տարբեր դրույթների բովանդակության կամ դրանց կիրառման վերաբերյալ, որոնք հենց տեղում հարթված լինեն: Տեղամասային ընտրական հանձնաժողովներն աշխատել են մեծ ծանրաբեռնվածությամբ, նաև ընտրողների ակտիվության պատճառով երբեմն առաջացել են հերթեր, սակայն չի գրանցվել որևէ դեպք, որ այդ պատճառով խոչընդոտվի ընտրողների ընտրական իրավունքի իրականացումը և որևէ ընտրող այդ պատճառով զրկվի ընտրական իրավունքից:

Ընտրական օրենսգրքի 58-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն. «Քվեարկության խցիկը պատրաստվում է այնպես, որ ընտրողը կարողանա քվեարկության սենյակում գտնվող անձանցից գաղտնի քվեարկել, ունենա բավարար լուսավորվածություն, տեղադրված լինի գրիչ, չօգտագործված քվեաթերթիկների արկղ»: Քվեարկության խցիկում չօգտագործված քվեաթերթիկների արկղի տեղադրումը նոր քվեակարգի կարևորագույն առանձնահատկություններից էր և քվեարկության խցիկների ճիշտ կահավորումից մեծապես կախված էր լինելու նոր քվեակարգի լիակատար կյանքի կոչումը: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մշակեց նոր քվեարկության խցիկների ձևը, որը լիակատար ապահովեց քվեարկության կարգի վերաբերյալ օրենսդրի մոտեցումները՝ բացառելով վերահսկվող քվեարկության հնարավորությունները:

Նոր ընտրական օրենսգիրքը նախատեսում էր նաև ինքնասոսնձվող դրոշմանիշերի կիրառում: Ընտրական օրենսգրքի 59-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն. «Ինքնասոսնձվող դրոշմանիշը պաշտպանիչ շերտերով տպարանային եղանակով պատրաստված դրոշմանիշ է, որի վրա նշված են ընտրության անվանման հապավումը, քվեարկության ամսաթիվը և ընտրականտեղամասի համարը: Ինքնասոսնձվող դրոշմանիշը ենթակա է հատուկ հաշվառման»: Ինքնասոսնձվող դրոշմանիշը տպագրվում է յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի համար առանձին: Օրենսգիրքը սահմանել է նաև յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովին տրվող ինքնասոսնձվող դրոշմանիշերի քանակները: Ընտրական օրենսգրքի պահանջներին համապատասխան ինքնասոսնձվող դրոշմանիշերը տպագրվում են կարճ ժամկետներում և դրանք պետք է հասցվեն տեղամասային ընտրական հանձնաժողովներ: Չնայած խիստ կարճ ժամկետներին (ընդամենը 3 օր), ընդհանուր թվով 2.685.300 ինքնասոսնձվող դրոշմանիշերի տպագրումը կազմակերպվեց սահմանված ժամկետներում՝ լիակատար հրապարակայնության պայմաններում՝ ապահովելով հանրային վերահսկողությունը, իսկ դրանց որակի, ինչպես նաև կիրառման առումով կապված որևէ խնդիր չառաջացավ:

Տեխնիկական սարքավորումների կիրառում

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների ժամանակ 1997 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գործարկվեցին 4.000 տեխնիկական սարքավորումներ:

Տեխնիկական սարքավորումների ամբողջ խմբաքանակը ստացվեց ընտրություններից 12 օր առաջ, չնայած այդ խիստ կարճ ժամկետներին բոլոր տեխնիկական սարքավորումները ներբեռնվեցին անհրաժեշտ ծրագրային ապահովմամբ և ամբողջ ծավալով կիրառվեցին ապրիլի 2-ի քվեարկության ժամանակ:

Տեխնիկական սարքավորումները, սահմանված կարգի համաձայն ունեին քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու ծրագրային հագեցվածություն:

Թվով 1447 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են մեկից ավելի տեխնիկական սարքավորումներ (891-ում օգտագործվել են 2 տեխնիկական սարքավորում, 556-ում՝ 3 տեխնիկական սարքավորում), որոնց աշխատանքը եղել է սինքրոնիզացված, ինչը հնարավորություն է տվել ընտրողին գրանցվել տեղամասային ընտրական հանձնաժողովում օգտագործվող տեխնիկական սարքավորումներից յուրաքանչյուրով՝ բացառելով նաև նույն ընտրողի կրկնակի գրանցման հնարավորությունը մյուս տեխնիկական սարքավորման միջոցով:

Տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակը քվեարկության օրվանից 5 օր առաջ, լիազոր մարմնի կողմից տրամադրվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների բաժանումն՝ ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների, և ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա, ինչպես նաև պատահական ընտրանքի սկզբունքով իրականացրել է այդ կրիչներում առկա տեղեկատվության ստուգումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նախապես հրապարակել էր հայտարարություն ընտրողների էլեկտրոնային ցուցակների՝ ըստ տարածքային ընտրական հանձնաժողովների սպասարկման տարածքների բաժանման և տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա ներբեռնման աշխատանքների իրականացման վայրի և ժամանակի մասին, որին կարող էին հետևել ընտրություններին մասնակցող կուսակցությունների (կուսակցությունների դաշինքների) լիազոր ներկայացուցիչներն ու վստահված անինք, միաժամանակ իրականացնելով նշված գործառույթների համացանցային հեռարձակումը՝ ուղիղ ժամանակային ռեժիմում:

Տեխնիկական սարքավորումների ծրագրային ապահովման վերստուգման համապատասխան կոդերը տրամադրվել են ընտրություններին մասնակցող և դիմում ներկայացրած կուսակցությունների (կուսակցությունների դաշինքի) ներկայացուցիչներին:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին 1997 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գործածված թվով 4000 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 90 տեխնիկական սարքավորման գործարկման հետ կապված: Մասնավորապես, տարբեր տեխնիկական պատճառներով խափանվել և նորերով են փոխարինվել ընդամենը՝ 13 տեխնիկական սարքավորում, որոնցից 5-ը քվեարկության նախորդ օրը, իսկ 8-ը քվեարկության օրը:

Թվով 3450 տեխնիկական սարքավորում աշխատել են սինքրոնիզացված և ընդամենը 26 տեխնիկական սարքավորման պարագայում են խնդիրներ ծագել,

որոնք անհապաղ լուծում են ստացել և միայն 2 դեպքում է, որ տեխնիկական սարքավորումներն անջատվել են և այդ տեղամասերում աշխատանքը շարունակվել է մի դեպքում՝ 1 սարքավորմամբ, մյուս դեպքում՝ 2: Թվով 11 տեխնիկական սարքավորման պարագայում ծագել է ծրագրային խնդիր և տպվել է մեկից ավելի կտրոն: Բացի թվարկված խնդիրներից, գրանցվել են նաև տեխնիկական սարքավորման էկրանի, միացման կոճակի, տպիչի, թղթի գլանի հետ կապված առանձին խնդիրներ, որոնք անմիջապես լուծում են ստացել:

Արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 1997 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը:

Ընտրական օրենսգրքով սահմանված կարգի համաձայն՝ քվեարկության ավարտից հետո, տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչներում առկա ընտրությունների մասնակցության և ընտրողների մատնահետքերը պարունակող տեղեկատվությունը ներմուծվել է համակարգիչ և Ընտրական օրենսգրքով սահմանված ժամկետների հաշվառմամբ փոխանցվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողով: Տվյալների կորուստ չի արձանագրվել և հիշողության բոլոր կրիչների տվյալները հաջողությամբ ներբեռնվել են կենտրոնական համակարգ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը Ազգային ժողովի ընտրության նախնական արդյունքները հրապարակելուց ոչ ուշ, քան 72 ժամ հետո, հատուկ համակարգչային ծրագրի միջոցով, ամփոփել է տեխնիկական սարքավորումներից դուրս բերված տվյալները և հրապարակել հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկության արդյունքների ամփոփում

Քվեարկության օրը ժամը 20:00-ին փակվել են բոլոր 2009 ընտրական տեղամասերը և տեղամասային ընտրական հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովները, Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով, քվեարկության ավարտից հետո՝ 12 ժամվա ընթացքում, ավարտել են քվեարկության արդյունքների ամփոփումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը, ժամը՝ 00.00-ից սկսած իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի՝ իր պաշտոնական կայքում հրապարակելով ընտրությունների նախնական արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքով ռեալ ժամանակի մեջ հնարավոր էր հետևել ընտրության արդյունքների ամփոփմանը՝ ստանալով յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները: Ընտրու-

թյան արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ:

Ընտրական տեղամասերի շուրջ 97%-ից ավելիում վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները տեսանկարահանել են քվեարկության արդյունքների ամփոփման ողջ գործընթացը: 2009 ընտրական տեղամասերից 1500-ում քվեարկության արդյունքների ամփոփման ողջ գործընթացին հնարավոր էր հետևել առցանց՝ տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների միջոցով: Հարկ է նկատել, որ ընտրություններին մասնակցող բոլոր կուսակցությունները, կուսակցությունների դաշինքներն ունեին ավելի լայն հնարավորություններ տեսախցիկներից օգտվելու համար:

Առկա չէ որևէ բողոք կամ նույնիսկ ահանգանգ, որ տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց չի տրվել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: Ի դեպ, առկա չէ թեկուզև մեկ դեպք, երբ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները տարբերվեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված տվյալներից:

Եթե տեխնիկական սարքավորումն անխափան աշխատել է քվեարկության ընթացքում, ապա Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորման միջոցով տպվում է տեղեկանք, որում նշվում են տարածքային ընտրական հանձնաժողովի և ընտրական տեղամասի համարները, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների հերթական համարը համապատասխան ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում: Տեղեկանքը պետք է պարունակի նշում այն ընտրողների վերաբերյալ, որոնց գրանցումն իրականացվել է անձը հաստատող փաստաթղթի տվյալները ստեղնաշարով տեխնիկական սարքավորման մեջ ներմուծելու միջոցով: Տեղեկանքը տպելու անհնարինության դեպքում այդ մասին համապատասխան գրառում է կատարվում գրանցամատյանում:

Տեղեկանքի մեկ օրինակը, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, տեղադրվում է պարկում, իսկ տեղեկանքի մեկական օրինակ, ստորագրված տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի կողմից և կնքված հանձնաժողովի կնիքով, ըստ պահանջի տրամադրվում է ամփոփման նիստին ներկա գտնվող թեկնածուներին, դիտորդներին և ընտրություններին մասնակցող կուսակցության մեկական վստահված անձի: Հարկ է նշել, որ նշված տեղեկանքը չտպագրվելու կամ իրավասու անձանց չտրամադրվելու որևէ դեպք առկա չի եղել:

Քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակում

Ընտրական օրենսգիրքն Ազգային ժողովի ընտրությունների համար սահմանել է նոր ինստիտուտ՝ քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների, բացառությամբ՝ զորամասում, քրեակատարողական հիմնարկում և ձերբակալված անձանց պահելու վայրում կազմվող՝ հրապարակում: Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի համաձայն.

«Ազգային ժողովի ընտրությունների ժամանակ տարածքային ընտրական հանձնաժողովը քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից սկսած, իրականացնում է ընտրողների ցուցակների սկանավորում, որին կարող են հետևել ընտրական հանձնաժողովների անդամները, թեկնածուները, վստահված անձինք, դիտորդները և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները:

Ընտրողների ցուցակները սկանավորվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և չափորոշիչներին համապատասխան այնպես, որ տվյալ ընտրական տեղամասի ընտրողների ցուցակում ընտրողի հերթական համարը, ազգանունը, անունը, հայրանունը, ծննդյան ամսաթիվը, հաշվառման վայրի հասցեն, ինչպես նաև ընտրողի ստորագրության, ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամի անհատական կնիքի համար նախատեսված սյունակները լինեն տեսանելի:

Ընտրողների սկանավորված ցուցակները ոչ ուշ, քան սկանավորման աշխատանքներն սկսվելուց 24 ժամ հետո պաշտոնապես հրապարակվում և ներբեռնելու և, ըստ ընտրական տեղամասերի, որոնման հնարավորությամբ տեղադրվում են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում»:

Ընտրողների ստորագրված ցուցակները սահմանված կարգով և ժամկետներում տեղադրվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: Նկատի ունենալով Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքի աննախադեպ մեծ հաճախելիությունը, ինչպես նաև ներբեռնվող նյութի ծավալներն առաջացել էին առանձին դժվարություններ կապված ցուցակների ներբեռնման աշխատանքների հետ: Նշված ցուցակների հասանելիությունն ապահովելու համար Կենտրոնական ընտրական հանձնաժողովում տեղադրվեցին լրացուցիչ համակարգիչներ և ապահովվեց հրապարակային ծանուցում, որ ծանոթացումը կարող է կատարվել նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի մամուլի սրահից, ինչպես նաև համացանցային կայքում տեղադրվեցին նոր լրացուցիչ հղումներ: Նշվածի մասին հրապարակայնորեն իրազեկվել է հանրությունը՝ մամուլի հաղորդագրություններ տարածելու միջոցով: Ավելին, տեղամասային կենտրոններում փակցված են եղել պաստառներ, որոնք ևս հիշեցնում էին ընտրողներին ստորագրված ցուցակների հրապարակման մասին: Ուշագրավ է նաև, որ ապրիլի 4-ից 5-ն ընկած ժամանակահատվածում, երբ հրապարակվել էին ընտրողների

ստորագրված ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջ այցելությունների թիվը կազմել է 120.297 և դիտվել է 671.948 էջ:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ օրենսգրքով սահմանված իրավասու անձը կարող է ներկայացնել այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվը կազմել է 1.575.786:

Ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածում, անգամ այդ ժամկետի ավարտից հետո, տարածքային ընտրական հանձնաժողովներից մեկում՝ թիվ 33 տարածքային ընտրական հանձնաժողովում ստացվել է մեկ դիմում մեկ քաղաքացու կողմից:

Մեկ քաղաքացու անուն էլ ներկայացվել է հրապարակայնորեն՝ զանգվածային լրատվության միջոցներով, որն անմիջապես ստուգվել է թիվ 1 տարածքային ընտրական հանձնաժողովի և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից: Մանրամասն ներկայացվել է պարզաբանում և ապացույցներ, որով հաստատվել է, որ այլ անձի փոխարեն քվեարկություն տեղի չի ունեցել:

Մինչ այժմ անընդհատ փորձ էր կատարվում շահարկել մասնակցության հարցը: Վկայակոչվում էին տարբեր վիճակագրություններ մասնակցության թվի, իբր ուռճացված լինելու հետ կապված, ներկայացվում էին տարբեր գնահատականներ, որպես հիմնավորում ներկայացվում էր ստորագրված բոլոր ցուցակներին ծանոթանալու հնարավորության բացակայությունը: Ստորագրված ցուցակները լիարժեք հասանելի են դարձվել, 1500 տեղամասերից իրականացվել է ուղիղ հեռարձակում, մեկ ամսից ավելի այդ ցուցաները տեղադրված են եղել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում: Հարյուր հազարավոր այցելություններ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայք ու ընդհամենը 1 դիմում: Սա նշանակում է, որ թե այս ընտրություններին, թե 2012թ., և թե 2013թ. ընտրություններին մասնակցության, այսպես կոչված, ուռճացված լինելու վերաբերյալ դատողությունները երբևէ չեն համապատասխանել իրականությանը:

Քվեարկության արդյունքների վերահաշվարկ

Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը:

Նշված հոդվածի 1-ին մասի համաձայն.

«Ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն կամ համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն կամ վստահված անձը, եթե նրանք ներկա են եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերաբերյալ արձանագրությունում քվեարկության

արդյունքների ամփոփման կարգի վերաբերյալ հատուկ կարծիք ունենալու մասին գրառում կատարելու դեպքում, իրավունք ունեն սույն օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում բողոքարկելու տվյալ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքները՝ տարածքային ընտրական հանձնաժողով ներկայացնելով ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի մասին (այսուհետ՝ վերահաշվարկ) դիմում»:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների վերահաշվարկի դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն:

Փաստենք, որ միշտ, այդ թվում՝ ընտրական օրենսգրքի մշակման աշխատանքների ժամանակ շահարկվում էր դիմում ներկայացնելու համար սահմանված ժամկետների կարճ լինելը: Ընտրական օրենսգրքով այդ ժամկետները երկարացվեցին: Ի դեպ, երբևէ այդ ժամկետի երկարաձգումը չի կարելի մեխանիկորեն համարել 2 ժամ, քանի որ դիմումատուների օգտին է աշխատում նաև քվեարկության հաջորդ օրվա ժամը 18.00-ից մինչև հաջորդ օրն առավոտյան ժամը 9.00-ն ընկած ժամանակը: Արդյունքում, բողոքարկման հնարավորության ժամկետը երկարաձգվեց 17 ժամով: Սա ևս աննախադեպ է Հայաստանի ընտրական օրենսդրության զարգացման պատմության տեսանկյունից:

Նկատենք, որ վերահաշվարկի դիմումի համար սահմանված են տարրական, պարզագույն պահանջներ: Այն պետք է ներառի դիմումատուի անունը, ազգանունը, փոստային հասցեն և այն ընտրական տեղամասի համարը, որում պահանջվում է կատարել վերահաշվարկ:

Դիմումին քվեարկության արդյունքների սխալ ամփոփման ապացույցներ կցելը, սոսկ դիսպոզիտիվ պարտականություն է և դրա չկատարումը չի կարող որևէ հետևանքի, այդ թվում՝ վերահաշվարկի կատարումը մերժելու հանգեցնել: Ակնհայտ է, որ նման դիմում ներկայացնելու համար առանձնահատուկ իրավական գիտելիքներ չեն պահանջվում, դիմումի լրացուցիչ պատճառաբանության, իրավական հիմնավորումների պահանջ գոյություն չունի:

Սահմանված ժամկետում թվով 4 տարածքային ընտրական հանձնաժողովներում ներկայացվել է 4 դիմում ընդհանուր թվով 12 ընտրական տեղամասերում (տեղամասերի ընդհանուր թվի 0.5%-ում) քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին: Դիմումներ ներկայացվել են պատգամավորի թեկնածուների կողմից, որոնցից ոչ մեկը ներկա չի եղել ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների ամփոփմանը: Երեք դիմում ներկայացվել է սահմանված ժամկետների խախտմամբ: Նշվածի հաշվառմամբ էլ տարածքային ընտրական հանձնաժողովները մերժել են դիմումներով վերահաշվարկի կատարումը:

Թվով 2009 տեղամասերից միայն 37 տեղամասերի (1.8%) քվեարկության արդյունքների արձանագրություններում է առկա եղել նշում հատուկ կարծիք ունենալու մասին: Ուշագրավ է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդհանուր

թվով 16.072 անդամներից միայն 38-ն (0.2%) են ներկայացրել հատուկ կարծիք: Ի դեպ, հատուկ կարծիք ներկայացրած հանձնաժողովի որևէ անդամի կողմից չի ներկայացվել դիմում՝ վերահաշվարկ կատարելու մասին:

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչում

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 12-րդ մասով սահմանված է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչելու ինստիտուտը: Համաձայն նշված իրավադրույթի.

Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ներկայացնելու իրավունք ունեն միայն՝

1) ընտրություններին մասնակցող կուսակցությունը, ընտրություններին մասնակցող կուսակցության ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուն, համայնքի ղեկավարի կամ ավագանու անդամի թեկնածուն.

2) վստահված անձը, եթե քվեարկության օրը ներկա է գտնվել քվեարկության սենյակում կամ ներկա է գտնվել տեղամասային ընտրական հանձնաժողովի արդյունքների ամփոփման նիստին.

3) համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամը, եթե արձանագրությունում կատարել է գրառում հատուկ կարծիք ունենալու մասին:

Ուշագրավ է, որ նման իրավունք վերապահվում է թե ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքին), և թե ընտրություններին մասնակցող կուսակցության (կուսակցությունների դաշինքի) ընտրական ցուցակում ընդգրկված թեկնածուին: Ի դեպ բնավ պարտադիր չէ նրանց կողմից տեղամասային կենտրոնում ներկա գտնվելու հանգամանքը:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու դիմում կարող է ներկայացվել միայն համապատասխան տարածքային ընտրական հանձ-նաժողով իրավասու անձի կողմից՝ քվեարկության հաջորդ օրը՝ ժամը 12.00-ից մինչև ժամը 18.00-ն, կամ քվեարկությունից հետո երկրորդ օրը՝ ժամը 9.00-ից մինչև ժամը 11.00-ն: Այս դեպքում ևս դիմումներ ներկայացնելու ժամկետը երկարաձգվել է 17 ժամով:

Թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողովներից միայն թիվ 35 տարածքային ընտրական հանձնաժողովում է ստացվել մեկ դիմում՝ «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի վստահված անձի կողմից, որով պահանջվել է անվավեր ճանաչել 35/55, 35/56 և 35/57 տեղամասերում (տեղամասերի ընդհանուր թվի 0.1%) քվեարկության արդյունքները: Դիմումը մերժվել է, քանի որ ներկայացված չեն եղել և իրականացված վարչական վարույթով էլ ձեռք չեն բերվել բավարար ապացույցներ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է մեկ դիմում «Հայ Յեղափոխական դաշնակցություն» կուսակցության կողմից: Դիմումը վերահասցեագրման կարգով ներկայացվել է թիվ 17 տարածքային ընտրական

հանձնաժողով, որն էլ դիմումի քննությամբ 2017թ. ապրիլի 7-ին կայացրել է որոշում Արագածոտնի մարզի, Փարպի համայնքի թիվ 17/21 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին, իսկ վարույթով ձեռք բերված նյութերն ուղարկվել են դատախազություն, ի դեպ դիմումով չկար ուղղակի պահանջ քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

Ընտրական օրենսգրքի 72-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն. «Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչվելու դեպքում այդ տեղամասում քվեարկության մասնակիցների թիվն արձանագրվում է որպես տեղամասում անճշտությունների գումարային չափ»:

Նույն օրենսգրքի 101-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Եթե ընտրությունների ընթացքում տեղի են ունեցել սույն օրենսգրքի այնպիսի խախտումներ, որոնք կարող էին ազդել ընտրությունների արդյունքների վրա, ապա Կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում առանձին ընտրական տեղամասերում վերաքվեարկություն անցկացնելու մասին, եթե այդ միջոցով հնարավոր է շտկել այդ խախտումների հետևանքները»:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Արագածոտնի մարզի, Փարպի համայնքի թիվ 17/21 ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների անվավեր ճանաչումը չի ազդում ընտրությունների արդյունքների վրա, Կենտրոնական ընտրական հանձանաժողովի կողմից ընտրական տեղամասում վերաքվեարկություն չի նշանակվել:

Տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում խախտումների վերաբերյալ գրառումներ

Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «Եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել սույն օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:»:

Միայն թվով 562 (կամ տեղամասերի ընդհանուր թվի 27.9%-ում) տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել թվով 1482 գրառումներ, իսկ թվով 1447 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ:

Ներկայացված գրառումների 98%-ից ավելին կատարվել են մի քանի տեղական դիտորդական կազմակերպությունների դիտորդների անունից: Կատարված գրառումները վերաբերել են քվեարկության օրն արձանագրված մասնավոր դեպքերի, որոնց մի մասը գրառում կատարող անձանց տեսակետներն էին և չէին վերաբերում քվեարկության կարգին, հետևապես չէին կարող որակվել որպես Ընտրական օրենսգրով սահմանված քվեարկության կարգի խախտում:

2017 թվականի ապրիլի 7-ին բոլոր թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են որոշումներ «2017 թվականի ապրիլի 2-ի Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ», որոնցով ամրագրվել է, որ Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովի սպասարկման տարածքում կազմավորված տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրը՝ 02.04.2017թ., արձանագրված խախտումների վերաբերյալ գնահատականները որևէ ազդեցություն չեն ունեցել քվեարկության արդյունքների վրա:

Դիմում բողոքների քննարկում

Ընտրական օրենսգրքի 47-49 հոդվածները «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի սկզբունքներին համապատասխան և ընտրական հարաբերությունների առանձնահատկությունների հաշվառմամբ մանրամասն կանոնակարգել է հանձնաժողովների որոշումների, գործողությունների (անգործության) բողոքարկման կարգն ու պայմանները:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկությանը օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովին է ներկայացվել 60 դիմում, որոնցից 18-ը՝ դիմում-բողոքներ են, 8-ը՝ պարզաբանման պահանջով դիմում, 19-ը՝ տեղեկատվության հարցմամբ դիմում: Նշված դիմում-բողոքներից 14-ը վերաբերում էին նախընտրական քարոզչության կանոնների խախտումներին, 3-ով պահանջվել է Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին մասնակցող կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու մասին հայցով դիմել դատարան: Մեկ դիմում էլ վերահասցեագրվել է ՀՀ ոստիկանություն: Թվով 4 դիմումներով հայցվել է խորհրդատվություն, թվով 8 դիմումներով էլ ներկայացվել են առաջարկություններ:

Ներկայացված բոլոր դիմումները Ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան քննարկվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և կայացվել են համապատասխան որոշումներ: Դիմումների քննարկման օրվա և ժամի մասին դիմումատուները եղել են պատշաճ ծանուցված, իսկ դիմումների քննության արդյունքում կայացված որոշումները սահմանված կարգով ուղարկվել են դիմումատուներին և հրապարակվել Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում: Բոլոր այն դեպքերում, երբ դիմումատուները ներկայացել են իրենց դիմումների քննարկմանը, ապահովվել է վերջիններիս լսվելու իրավունքը:

Թվով 12 դիմումներով Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ընդունել է վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշումներ, սակայն նշված դիմումներում ներկայացված փաստերը դիտարկել է որպես հաղորդումներ և Կենտրոնական ընտրական հանձնաժողովը սեփական նախաձեռնությամբ, դրանցով

հարուցել է վարչական վարույթներ, ի պաշտոնե ձեռք բերել ապացույցներ և կայացրել համապատասխան որոշումներ:

Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:»: Զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկությունները օպերատիվ կարգով ճշգրտվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն օպերատիվ կարգով արձագանքել է թվով 42 կայքերում տեղ գտած հաղորդումների, ստուգվել են հրապարակվող հանգամանքները և տրվել մեկնաբանություններ, որոնք հրապարակվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Ազգային ժողովի 2017թ. ապրիլի 2-ի ընտրությունների քվեարկության օրը թվով 4 տարածքային ընտրական հանձնաժողովներին սահմանված կարգով ներկայացված են եղել թվով 5 դիմում: Ներկայացված բոլոր դիմումներն էլ սահմանված կարգով քննարկվել են տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից և ընդունվել համապատասխան որոշումներ:

Քվեարկության օրվանից հետո թվով 38 տարածքային ընտրական հանձնաժողովներից 37-ում ստացվել են ընդհանուր առմամբ թվով 324 դիմում-բողոք (բացառապես՝ դիտորդական առաքելություն իրականացրած թվով երեք հասարակական կազմակերպությունների և նրանց կողմից հավատարմագրված դիտորդների կողմից), որոնցից 36-ը՝ գրությամբ վերադարձվել են դիմումատուներին՝ վերջնաժամկետի խախտմամբ ներկայացված լինելու պատճառաբանությամբ, մնացած դիմումների ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են թվով 127 որոշում: Վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում տարածքային ընտրական հանձնաժողովները դիմումներում ներկայացված հանգամանքները գնահատել են որպես հաղորդումներ, սեփական նախաձեռնությամբ հարուցել են վարչական վարույթներ և կայացրել որոշումներ:

Դատարան ներկայացված հայցադիմումները և դրանց քննությունը

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան են ներկայացվել 6 հայցադիմում:

Ընդհանուր առմամբ Վարչական դատարանի կողմից քննված վարչական գործերից 2-ով (ՎԴ/2433/05/17, ՎԴ/2506/05/17) հայցադիմումներով ներկայացված պահանջները մերժվել են, 2-ով (ՎԴ/2702/05/17, ՎԴ/2886/05/17) կայացվել է որոշում վարչական գործի վարույթը կարճելու մասին, հայցադիմումներից 1-ի ընդունումը մերժվել է, 1 հայցադիմումի ընդունումը մասով մերժվել է, մասով ընդունվել վարույթ:

Առկա չէ, որևէ դատական ակտ, որով փաստվել է անձանց ընտրական իրավունքների խախտում:

Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրությունների քվեարկության օրվանից հետո Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել մոտ 100 հայցադիմում դիտորդական առաքելություն իրականացրած թվով երեք տեղական հասարակական կազմակերպությունների և նրանց կողմից հավատարմագրված դիտորդների կողմից, որոնցով վիճարվել են ընտրական հանձաժողովների վարչական ակտերը:

Ընտրությունների արդյունքների բողոքարկում

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 15-րդ մասի համաձայն.

«Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմում ընտրությունների արդյունքներն ամփոփող ընտրական հանձնաժողով կարող է ներկայացվել ընտրության արդյունքներն ամփոփելու համար սույն օրենսգրքով սահմանված համապատասխան ժամկետից առնվազն 2 օր առաջ՝ մինչև ժամը 18.00-ն: Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումների քննարկումը կատարվում է ընտրությունների արդյունքների ամփոփման շրջանակում, և դրանց վերաբերյալ առանձին որոշում չի կայացվում»:

2017 թվականի ապրիլի 7-ին Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է դիմում Ազգային ժողովի 2017 թվականի ապրիլի 2-ի ընտրություններին մասնակցող «Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից:

Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «Ընտրական հանձնաժողովներ ներկայացված դիմումը պետք է ստորագրված լինի դիմողի կողմից, ներառի նրա անունը, ազգանունը, դիմողի հասցեն, տրման ամսաթիվը: Դիմումը կարող է ներառել նաև դիմումատուի հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստի հասցեն: Դիմումում պետք է սահմանված լինի դիմումատուի պահանջը, բերված լինեն դիմումատուի հիմնավորումները: Հնարավոր ապացույցները պետք է կցված լինեն դիմումին»:

Նշված իրավանորմը սահմանում է հստակ պարտավորություն դիմումատուի համար դիմումի հիմնավորումներ ներկայացնելու և հնարավոր բոլոր ապացույցները դիմումին կից ներկայացնելու համար: Նշված կանոնակարգման հիմքը, թերևս ընտրական իրավահարաբերությունների համար Ընտրական օրենսգրքով սահմանված առանձնահատկություններն են, քանզի դիմումների քննության համար սահմանված են սովորականի համեմատ ավելի կարճ ժամկետներ և որպեսզի

լիարժեք կազմակերպվի դիմումի քննությունը օրենսդրի կողմից սահմանված է դիմումով հիմնավորումները ներկայացնելու և ապացույցները կցելու պարտականություն:

Դիմումը կազմված էր 121 էջից, ներառում էր 21 բաժիններ: Դիմումում ներկայաց-ված էին բացառապես առանձին դիտորդների կողմից արված դիտարկումները կամ դատողությունները: Դիմումում ներկայացված բոլոր գրառումները անկախ իրենց բովանդակությունից վերաբերում էին ընդհանուր թվով 262 տեղամասերի կամ տեղամասերի ընդհանուր թվի 13 տոկոսին:

Ուշագրավ է, որ դիմումատուի կողմից 1825 տեղամասերում նշանակված են եղել տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամներ, դիմումատուն հազարից ավելի տեղամասերում ունեցել է վստահված անձինք: Սակայն ներկայացված դիմումում առկա չէր որևէ նկատառում՝ արտահայտված նշված անձանց կողմից:

Դիմումին կից ներկայացված չէր որևէ պատշաճ ապացույց: Դիմումում նշված էին դիտորդների դիտարկման ընթացքում իրականացրած դատողությունները, սակայն առկա չէր որևէ առաջնային բնույթի ապացույց, որ նշված բացատրությունները, դիտարկման արդյունքները իրականում պատկանում են այն անձանց, որոնց անունից դրանք ներկայացվել են:

Նշված դիմումը սահմանված կարգով քննարկվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և դրա վերաբերյալ քննարկման արդյունքները և իրավական դիրքորոշումները մանրամասն ներկայացված են ընտրության արդյունքների վերաբերյալ ընդունված որոշման մեջ:

Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի համաձայն՝ պատգամավորների ընտրությունների արդյունքներով ընդունված որոշումների հետ կապված վեճերը լուծում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը:

«Կոնգրես-ՀԺԿ» կուսակցությունների դաշինքի կողմից վիճարկվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 163-Ա որոշումը:

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի 2017 թվականի ապրիլի 28-ի թիվ ՍԴՈ-1364 որոշմամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2017 ապրիլի 9-ի «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրությունների արդյունքներն ամփոփելու մասին» թիվ 163-Ա որոշումը թողնվել է ուժի մեջ:

Մանդատների բաշխումը կուսակցությունների, կուսակցությունների դաշինքների միջև

	Ընդամենը	Համապետական	Ընտ. տարածք
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	58	31	27
«ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	31	16	15
«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	9	5	4
«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	4	3



Մանդատների բաշխումն ըստ ընտրական տարածքների

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	2	3	2	3	2	1	2	3	2	2	2	1
«ԾԱՌՈՒԿՅԱՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	1	1	1	1	2	1	1	1	1	2	2	1	0
«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	1	1	1	1	0	0	0	0	0	0	0	0	0
«ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0	0	0	0	0	1	0	0	0	0	1	0	1



ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 14-Ի ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Երևանի ավագանու ընտրություններն անցկացվել են 2017 թվականի մայիսի 14-ին՝ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 127-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ժամկետում:

Ընտրական օրենսգրքի 16-րդ հոդվածին համապատասխան քվեարկությունը կազմակերպելու և քվեարկության արդյունքներն ամփոփելու նպատակով Երևան քաղաքում կազմավորվել է թվով 474 ընտրական տեղամաս, որոնցում սահմանված կարգով նշանակվել են 3.792 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամներ: Քվեարկության օրը նշված քաղաքացիներից բացակայել են 14-ը:

Տեղեկատվություն կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից նշանակված տեղամասային ընտրական հանձնաժողովների անդամների վերաբերյալ

	ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ			ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ			ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ		
	ըստ բաշխ-ման	ըստ հայտի	որից՝ նշանակվել է ՏԸՀ նախագահի կողմից	ըստ բաշխ-ման	ըստ հայտի	որից՝ նշանակվել է ՏԸՀ նախագահի կողմից	ըստ բաշխ-ման	ըստ հայտի	որից՝ նշանակվել է ՏԸՀ նախագահի կողմից
ՀՀԿ	211	211		211	211		52	52	1
ԲՀԿ	148	148		148	148		178	178	
ՀԱԿ	37	37		37	37		400	400	
ԺԱՌԱՆԳ.	26	26		26	26		422	422	
ՀՅԴ	26	26		26	26		422	422	1
ՕԵԿ	26	26		26	26		422	422	
Ընդամենը	474	474	0	474	474	0	1896	1896	2



Տեղամասային ընտրական հանձնաժողովների կազմերում ինքնաբացարկները

	Ընդամենը	Հանձնաժողովի նախագահ	Հանձնաժողովի քարտուղար	Հանձնաժողովի անդամ
ՏԸՀ	146	0	0	146
ՀՀԿ	47	21	19	7
ԲՀԿ	36	13	15	8
ՀՅԴ	19	1	2	16
ՕԵԿ	21	0	2	19
ԺԱՌԱՆԳ.	7	0	1	6
ՀԱԿ	5	0	1	4
Ընդամենը	281	35	40	206



Ընտրությունների կազմակերպումն ու անցկացումն իրականացրել են Երևան քաղաքի տարածքում կազմավորված թվով 10 տարածքային ընտրական հանձնաժողովները: Ընտրությունների ողջ գործընթացը կազմակերպել և վերահսկել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:

Դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով հավատարմագրվել են տեղական 17 հասարակական կազմակերպություններ, որոնց անունից հավատարմագրված դիտորդների ընդհանուր թիվն է՝ 5.138: Միջազգային դիտորդական առաքելություն իրականացնելու նպատակով, որպես միջազգային կազմակերպություն, հավատարմագրվել է Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը (10 միջազգային դիտորդ):

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվել են 32 տեղական զանգվածային լրատվության միջոցների թվով 436 ներկայացուցիչներ: Քվեարկության օրն ընտրությունների և քվեարկության վերաբերյալ լուսաբանում իրականացնելու նպատակով հավատարմագրվել է օտարերկրյա 3 զանգվածային լրատվության միջոց:

Թեկնածուների առաջադրումը, գրանցումը

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրություններին առաջադրվել է «Ելք» կուսակցությունների դաշինքը, «Երկիր Ծիրանի» կուսակցությունը և Հայաստանի Հանրապետական կուսակցությունը:

Ընտրություններին առաջադրված երկու կուսակցություններն ու կուսակցությունների մեկ դաշինքը գրանցվել են Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով և ժամկետներում:

Ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 309 թեկնածուներից մերժվել է միայն մեկ թեկնածուի գրանցում՝ գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու պատճառաբանությամբ:

Տեղեկատվություն կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի թեկնածուների վերաբերյալ

	առաջադրված	ինքնաբացարկ	մերժված
«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	63	1	
«ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	51		1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	195	27	
ԸՆԴԱՄԵՆԸ	309	28	1



Տեղեկատվություն թեկնածուների վերաբերյալ ըստ սեռի

	ՏՂԱՄԱՐԴ	որից՝ ընտրված	ԿԻՆ	որից՝ ընտրված
«ԵԼՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	41	9	21	5
ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	21	2	29	3
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	128	36	40	10
ԸՆԴԱՄԵՆԸ	190	47	90	18



Նախընտրական քարոզչություն, քարոզչության ֆինանսավորում

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների ժամանակ ևս Ընտրական օրենսգրքի պահանջների պահպանմամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում սահմանված ժամկետներում հրապարակված են եղել՝

- նախընտրական միջոցառումների համար անվճար տրամադրվող դահլիճների և այլ շինությունների ցանկը (ընդհանուր թիվը 26).

- քարոզչական պաստառներ փակցնելու համար առանձնացված անվճար տեղերի ցանկը (ընդհանուր թվով 444).

- հեռուստառադիոընկերությունների կողմից տրամադրվող վճարովի եթերաժամի մեկ րոպեի գինը:

Ըստ նախապես ներկայացված հայտերի Կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրականացրել է հինգ քառակուսի մետրը գերազանցող արտաքին գովազդային վահանակների բաշխումը ընտրություններին մասնակցող կուսակցությունների և կուսակցությունների դաշինքի միջև:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշմամբ սահմանվել է հանրային ռադիոյից և հանրային հեռուստատեսությունից ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին անվճար և վճարովի եթերաժամ տրամադրելու կարգը և ժամանակացույցը:

Նախընտրական քարոզչության համար Ընտրական օրենսգրքով սահմանված բոլոր միջոցառումների կազմակերպման նախապատրաստական աշխատանքները կատարված են եղել մինչև նախընտրական քարոզչության մեկնարկը, ինչն ապահովել է բոլոր թեկնածուների համար հավասար պայմաններ և հնարավորություններ հենց նախընտրական քարոզչության մեկնարկի առաջին իսկ օրվանից:

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածում անմիջական դիտարկման է ենթարկվել հեռուստառադիոծրագրերի և դրանց տեսագրությունների (ձայնագրությունների) ավելի քան 5376 եթերաժամ, որից 3.024 ժամը՝ հեռուստածրագրերի մշտադիտարկում, իսկ 2352 ժամը՝ ռադիոծրագրերի մշտադիտարկում: Ուղղակի մշտադիտարկումն իրականացվել է հեռուստառադիոընկերությունների վերահսկման պատահական ընտրանքի և հավասարաչափ բաշխման սկզբունքով:

Երևանի ավագանու ընտրություններին մասնակցող կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին վճարովի կարգով տրամադրվող եթերաժամանակի սակագնի սահմանման և անփոփոխության օրենսդրական պահանջների, ինչպես նաև եթերաժամանակի ոչ խտրական տրամադրման խախտումներ չեն արձանագրվել:

2017թ. ապրիլի 5-ից մինչև մայիսի 14-ն ընկած ժամանակահատվածում Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովն ընտրություններին մասնակցող կուսակցություններից և կուսակցությունների դաշինքից բողոք չի ստացել: Պետական մարմիններից, հասարակական և միջազգային կազմակերպություններից, լրատվամիջոցներից, քաղաքացիներից նախընտրական քարոզչությանը վերաբերող դիմում-բողոքներ չեն ստացվել:

Երևանի ավագանու 2017թ. մայիսի 14-ի ընտրությունների նախընտրական քարոզչության (21.04.2017-12.05.2017թթ.), ինչպես նաև քվեարկության նախորդ օրը և քվեարկության օրը մինչև ժամը 20.00-ն Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի և «Հեռուստատեսության և ռադիոյի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Երևանի ավագանու ընտրություններում գրանցված 2 կուսակցությունները և կուսակցությունների մեկ դաշինքը սահմանված կարգով բացել են նախընտրական հիմնադրամներ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը, համադրելով Կենտրոնական բանկից ստացված տեղեկանքները կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ստացված հայտարարագրերի, ինչպես նաև կատարված վճարումները հավաստող փաստաթղթերի և կնքված պայմանագրերի հետ՝ Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը փաստում է, որ բոլոր կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի կողմից ներկայացված՝ նախընտրական հիմնադրամներում եղած միջոցների օգտագործման վերաբերյալ հայտարարագրերում խախտումներ չեն հայտնաբերվել և դրանք համապատասխանում են Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքով սահմանված կանոնակարգումներին:

Տեխնիկական սարքավորումների կիրառում

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների ժամանակ կազմավորված 474 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գործարկվել են 1211 տեխնիկական սարքավորում, 207-ում օգտագործվել են 2 տեխնիկական սարքավորում, 265-ում՝ 3 տեխնիկական սարքավորում և ընդամենը 2-ում՝ 1-ական տեխնիկական սարքավորում:

Այս ընտրություններում ևս տեխնիկական սարքավորումները, սահմանված կարգի համաձայն ունեցել են քվեարկության մասնակիցներին հաշվառելու, կրկնակի գրանցումը բացառելու ծրագրային հագեցվածություն:

Երևանի ավագանու ընտրություններին 474 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գործածված թվով 1211 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 10 տեխնիկական սարքավորման գործարկման հետ կապված, որոնք փոխարինվել են նորերով, որոնցից 3-ը քվեարկության նախորդ օրը, իսկ 7-ը քվեարկության օրը:

Թվով 1209 տեխնիկական սարքավորում աշխատել են սինքրոնիզացված և ընդամենը 1 տեխնիկական սարքավորման պարագայում է խնդիր ծագել, որն

անհապաղ լուծում է ստացել: Քվեարկության օրը գրանցվել են նաև տեխնիկական սարքավորման ժամի, տպիչի, թղթի գլանի հետ կապված առանձին խնդիրներ, որոնք անմիջապես լուծում են ստացել:

Արդյունքում, քվեարկության օրը, բոլոր 474 տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը:

Քվեարկություն, քվեարկության արդյունքերի ամփոփում

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների անցկացման նպատակով Երևան քաղաքում կազմավորվել է թվով 474 ընտրական տեղամաս:

Քվեարկության օրը, առավոտյան ժամը 7.00-ին 474 տեղամասային կենտրոններում կայացել են տեղամասային ընտրական հանձնաժողովների նիստերը և ժամը 8.00-ին բացվել են բոլոր տեղամասային կենտրոններն ու սկսվել է քվեարկությունը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ժամը 9.00-ին, տեղեկություններ է հրապարակել ընտրությունների ընթացքի մասին, իսկ ժամը 12.00-ից սկսած՝ մինչև ժամը 21.00-ն, երեքժամյա պարբերականությամբ՝ ըստ ընտրական տարածքների, Երևան քաղաքի և Երևան քաղաքի վարչական շրջանների հրապարակել է տեղեկություններ մինչև նախորդ ժամը քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի վերաբերյալ: Քվեարկությանը մասնակցած ընտրողների թվի մասին տեղեկությունների հրապարակումից հետո դրանք ըստ ընտրական տեղամասերի տեղադրվել են հանձնաժողովի համացանցային կայքում:

Քվեարկությունն անցել է հանգիստ և խաղաղ մթնոլորտում:

Քվեարկության օրը Երևան քաղաքի 474 ընտրական տեղամասերում միասին վերցրած ընտրական գործընթացին հետևել են ընտրություններին մասնակցող կուսակցությունների, կուսակցությունների դաշինքի թվով 1.600 վստահված անձ, ընտրական տեղամասեր են այցելել ընդհանուր թվով 4.817 միջազգային և տեղական դիտորդներ, զանգվածային լրատվության միջոցների 645 ներկայացուցիչներ: 474 ընտրական տեղամասերում արդյունքների ամփոփմանը հետևել են ընդհանուր թվով 1799 դիտորդներ ու զանգվածային լրատվության միջոցի ներկայացուցիչներ: Քվեարկությանը մասնակցած 345.158-ից քաղաքացիներից օգնողների օգնությամբ է մասնակցել քվեարկությանը 6541 (1.9%) ընտրող:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովներից և որևէ մեկի կողմից՝ Ընտրական օրենսգրքի 31-րդ հոդվածի 5-րդ և 8-րդ մասերով, 34-րդ հոդվածի 4-րդ մասով, 65-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ վստահված անձին, դիտորդին, զանգվածային լրատվության միջոցի

ներկայացուցչին հանձնաժողովի նիստից հեռացնելու, ինչպես նաև դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների առավելագույն թիվը սահմանափակելու իրավանորմերը չեն կիրառվել:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովում և տարածքային ընտրական հանձնաժողովներում վստահված անձանց իրավունքների իրականացմանը խոչընդոտելու կամ վերջիններիս լիազորությունները սահմանափակելու վերաբերյալ դիմումներ չեն ստացվել: Քվեարկության օրը եղել են մի քանի ահազանգեր, որոնք օպերատիվ կերպով ստուգվել են և ըստ անհրաժեշտության ձեռնարկվել են միջոցներ:

Բոլոր ընտրական տեղամասերը փակվել են ժամը 20:00-ին և տեղամասային ընտրական հանձնաժողովներն Ընտրական օրենսգրքով սահմանված կարգով սկսել են քվեարկության արդյունքների ամփոփման նիստերը և սահմանված ժամկետում՝ քվեարկության ավարտից հետո՝ 12 ժամվա ընթացքում, ավարտել են քվեարկության արդյունքների ամփոփումը:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը ոչ ուշ, քան քվեարկության հաջորդ օրը, ժամը՝ 00.00-ից սկսած իրականացրել է քվեարկության արդյունքների աղյուսակավորում՝ ըստ ընտրական տեղամասերի՝ իր պաշտոնական կայքում հրապարակելով ընտրությունների նախնական արդյունքներն՝ ըստ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալների: Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքով ռեալ ժամանակի մեջ հնարավոր է եղել հետևել ընտրության արդյունքների ամփոփմանը և ստանալ յուրաքանչյուր ընտրական տեղամասի տվյալները: Ընտրության արդյունքների ամփոփման ամբողջ գործընթացն իրականացվել է բաց և թափանցիկ:

Ընտրական տեղամասերի շուրջ 73 %-ում վստահված անձինք, դիտորդները, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչները տեսանկարահանել են քվեարկության արդյունքերի ամփոփման ողջ գործընթացը: Չնայած Երևանի ավագանու ընտրությունների համար օրենսդրական պահանջի բացակայությանը, Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախաձեռնությամբ իրականացվել է բոլոր ընտրական տեղամասերում քվեարկության ամբողջ ընթացքի և քվեարկության արդյունքերի ամփոփման ողջ գործընթացի առցանց՝ ուղիղ ժամանակային ռեժիմում հեռարձակում՝ տեղամասային կենտրոններում տեղադրված տեսախցիկների միջոցով, իսկ ընտրություններին մասնակցող կուսակցություններն ու կուսակցությունների դաշինքն ունեցել են ավելի լայն հնարավորություններ տեսախցիկներից օգտվելու համար:

Տեղամասային ընտրական հանձնաժողովում ներկա լինելու իրավունք ունեցող անձանց պահանջով նրանց տրվել է ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրությունից քաղվածք՝ վավերացված հանձնաժողովի նախագահի և քարտուղարի ստորագրություններով և հանձնաժողովի կնիքով: Ի

դեպ, առկա չէ թեկուզև մեկ դեպք, երբ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքների արձանագրության տվյալները տարբերվեն Կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում հրապարակված տվյալներից:

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների ժամանակ, թեև քվեարկության ավարտից հետո տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ տեղեկանք տպելու օրենսդրական պահանջ ներկայացված չի եղել, այդուհանդերձ Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ևս քվեարկության ընթացքում բոլոր տեղամասերում տեխնիկական սարքավորումներն աշխատել են անխափան և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տեխնիկական սարքավորման միջոցով տպվել են նշված տեղեկանքները, և ըստ պահանջի տրամադրվել ամփոփման նիստին ներկա գտնվող վստահված անձանց, թեկնածուներին, դիտորդներին և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին:

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի քվեարկության նախնական արդյունքները հրապարակվել են 2017 թվականի մայիսի 15-ին, իսկ վերջնական արդյունքները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հրապարակել է 2017 թվականի մայիսի 21-ին:

Տեղեկատվություն կազմավորված տեղամասերի, ընտրողների թվերի, մասնակցության վերաբերյալ

Վարչական շրջան	Տեղամասերի թիվ	Ընտրողների ընդհանուր թիվ	Քվեարկության մասնակիցների ընդհանուր թիվ	Մասնակցության՝ %
Աջափնյակ	52	84522	38286	45.30
Ավան	23	39848	21022	52.76
Արաբկիր	53	95577	37104	38.82
Դավթաշեն	19	32356	14136	43.69
Էրեբունի	50	93154	37918	40.70
Կենտրոն	54	95855	36928	38.52
Մալաթիա-Սեբաստիա	60	107779	35787	33.20
Նոր Նորք	57	100481	41237	41.04
Նորք-Մարաշ	6	10700	5422	50.67
Նուբարաշեն	5	8133	4284	52.67
Շենգավիթ	63	114935	53494	46.54
Քանաքեռ-Զեյթուն	32	58811	19540	33.23
Ընդամենը	474	842151	345158	40.99



Կուսակցություններին, կուսակցությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվը

Կուսակցության, կուսակցությունների դաշինք	Կողմ ձայներ
ԵԼՔ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇԻՆՔ	70,730
ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	26,107
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	240,034



Կուսակցություններին, կուսակացությունների դաշինքին կողմ քվեարկած քվեաթերթիկների թիվն ըստ Երևան քաղաքի վարչական շրջանների

ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	ԵԼՔ	%	ԵԾԿ	%	ՀՀԿ	%
Աջափնյակ	7453	19.86	2695	7.18	27386	72.96
Ավան	3218	15.66	1106	5.38	16219	78.95
Արաբկիր	9485	26.20	4105	11.34	22609	62.46
Դավթաշեն	3385	24.48	1051	7.60	9391	67.92
Էրեբունի	5800	15.74	2343	6.36	28713	77.91
Կենտրոն	8180	22.72	3658	10.16	24168	67.12
Մալաթիա-Սեբաստիա	7864	22.65	2398	6.91	24453	70.44
Նոր Նորք	8801	21.85	3190	7.92	28279	70.22
Նորք-Մարաշ	753	14.15	310	5.83	4258	80.02
Նուբարաշեն	450	10.68	161	3.82	3602	85.50
Շենգավիթ	9359	17.87	3044	5.81	39974	76.32
Քանաքեռ-Զեյթուն	5982	31.47	2046	10.76	10982	57.77
Ընդամենը	70730	21.00	26107	7.75	240034	71.25



Քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակում

Ընտրական օրենսգիրքը Երևանի ավագանու ընտրությունների համար չի նախատեսում քվեարկությանը մասնակցած ընտրողների ստորագրված ցուցակների հրապարակում, սակայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովը հիմքում ունենալով Ընտրական օրենսգրքի 73-րդ հոդվածի 3.1-րդ մասի իրավակարգավորումները ընտրողների ստորագրված ցուցակները, Ազգային ժողովի ընտրությունների համար սահմանված կարգով և ժամկետներում, տեղադրեց Կենտրոնական ընտրական հանձնաժողովի համացանցային կայքում: 2017թ. մայիսի 16-ից 17-ն ընկած ժամանակահատվածում, երբ հրապարակվել էին Երևանի ավագանու ընտրությունների ընտրողների ստորագրված ցուցակները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքէջ այցելությունների թիվը կազմել է 76.321 և դիտվել է 234.721 էջ:

Ընտրական օրենսգրքի 48-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն՝ օրենսգրքով սահմանված իրավասու անձը կարող է ներկայացնել այլ անձի փոխարեն քվեարկելու մասին դիմում համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողով քվեարկության հաջորդ օրը ժամը 12.00-ից մինչև քվեարկության օրվանից հետո երրորդ օրը՝ ժամը 11.00-ն:

Ընտրական օրենսգրքով սահմանված ժամանակահատվածում, անգամ այդ ժամկետի ավարտից հետո, որևէ ընտրական հանձնաժողովում չի ստացվել թեկուզև մեկ դիմում այլ անձի փոխարեն քվեարկելու մասին: Չի եղել անգամ որևէ հրապարակում կամ հրապարակային փաստի հայտարարում՝ այլ անձի փոխարեն քվեարկություն կատարելու վերաբերյալ:

Դիմում-բողոքներ, քննարկման արդյունքներ

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման ընթացքում մինչև քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողով է ներկայացվել 2 դիմում «Ելք» կուսակցությունների դաշինքի կողմից: Նշված դիմումներից մեկով պահանջվել է Երևանի ավագանու 14.05.2017թ. ընտրություններում գրանցված կուսակցության գրանցումն ուժը կորցրած ճանաչելու պահանջի մասին հայցով դիմել դատարան, իսկ մյուս դիմումով ներկայացվել է պահանջ՝ օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ միջոցներ ձեռնարկելու մասին: Նշված դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվել 2017 թվականի մայիսի 12-ին և նույն օրն էլ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 47-րդ, 48-րդ և 49-րդ հոդվածների պահանջներին համապատասխան դրանք քննարկվել են Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից և կայացվել են թիվ 261-Ա և 262-Ա որոշումները:

Երևանի ավագանու 2017թ. մայիսի 14-ի ընտրությունների քվեարկության օրը Կենտրոնական և տարածքային ընտրական հանձնաժողովներին որևէ գրավոր

դիմում չի ներկայացվել, սակայն Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում ներկայացվել են առանձին տեղեկություններ ընտրախախտումների վերաբերյալ:

Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն. «Օպերատիվ լուծում պահանջող հարցերի վերաբերյալ ընտրական հանձնաժողովները ձեռնարկում են համապատասխան միջոցներ: Նման դեպքերում առանձին ակտի տեսքով որոշումների ընդունումը պարտադիր չէ:»:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահի կարգադրությամբ Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստեղծվել է իրավիճակային վերլուծության կենտրոն, որտեղ գործել է նաև թեժ գիծ:

Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովում գործող թեժ գծով, զանգվածային լրատվության միջոցներում և տարբեր էլեկտրոնային կայքերում տեղ գտած ընտրախախտումների վերաբերյալ տեղեկություններն օպերատիվ կարգով ուսումնասիրվել են իրավիճակային վերլուծության կենտրոնի կողմից, դրանցում ներկայացվող տեղեկությունների իսկությունը և ներկայացվող փաստական հանգամանքները պարզվել են համապատասխան ընտրական հանձնաժողովների, պետական այլ մարմինների հետ և տեղեկությունների հաստատման պարագայում տրվել են համապատասխան ցուցումներ կամ հանձնարարություններ: Քվեարկության օրը Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ու իրավիճակային վերլուծության կենտրոնն օպերատիվ կարգով արձագանքել է մեկ տասնյակից ավելի կայքերում տեղ գտած ավելի քան ութ տասնյակ հաղորդումներին, ստուգվել են հրապարակվող հանգամանքները և տրվել մեկնաբանություններ: Մեկնաբանություններն ու պարզաբանումները հենց քվեարկության օրը զետեղվել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովի պաշտոնական կայքում:

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրություններին մասնակցող երկու կուսակցություններից և կուսակցությունների մեկ դաշինքից, նրանց ընտրական ցուցակներում ընդգրկված ընդհանուր թվով 280 թեկնածուներից, ինչպես նաև նրանց ընդհանուր թվով 1600 վստահված անձանցից, ինչպես նաև տեղամասային ընտրական հանձնաժողովի արձանագրությունում հատուկ կարծիք ունենալու վերաբերյալ գրառում կատարած տեղամասային ընտրական հանձնաժողովների երեք անդամներից և որևէ մեկը չի ներկայացրել դիմում՝ ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին:

Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածը սահմանում է քվեարկության արդյունքների վերահաշվարկի ինստիտուտը:

Երևան քաղաքում կազմավորված 474 ընտրական տեղամասերում Ընտրական օրենսգրքի 50-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված սուբյեկտների կողմից քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ ներկայացվել է երկու դիմում, որով պահանջվել է վերահաշվարկել երկու տեղամասերում քվեարկության արդյունքները: Քվեարկության արդյունքների վերահաշվարկի վերաբերյալ դիմումները ներկայացված են եղել «Ելք» կուսակցությունների դաշինքի վստահված անձանց կողմից:

Ներկայացված դիմումներով քվեարկության արդյունքների վերահաշվարկ է իրականացվել պահանջված՝ 7/51 և 7/53 տեղամասերում:

2017 թվականի մայիսի 16-ին ներկայացվել է դիմում-բողոք՝ Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրություններին մասնակցող «Երկիր Ծիրանի» կուսակցության լիազոր ներկայացուցչի կողմից՝ 2017 թվականի մայիսի 14-ին Երևանի քաղաքապետի և ավագանու ընտրությունների արդյունքներն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

Ընտրության արդյունքներն անվավեր ճանաչելու մասին դիմումը չի ներկայացվել իրավասու անձի՝ «Երկիր Ծիրանի» կուսակցության կողմից, այդուհանդերձ, Կենտրոնական ընտրական հանձնաժողովը, կարևորելով ընտրական գործընթացների նկատմամբ լիակատար թափանցիկության ապահովման հրամայականը, անդրադառձել է դիմումի դատողություններին՝ չնայած, որ դրանք չունեին ապացուցողական հիմքեր, զուրկ են եղել իրավական հիմնավորումներից և պարունակել են կամայական եզրահանգումներ:

Քվեարկության օրվանից հետո Կենտրոնական ընտրական հանձնաժողովում ստացվել է հինգ դիմում-բողոք, որոնցից չորսը՝ դիտորդական առաքելություն իրականացրած մեկ հասարակական կազմակերպության և նրա դիմումով հավատարմագրված դիտորդների կողմից, և մեկը՝ «Ելք» կուսակցությունների դաշինքի լիազոր ներկայացուցչի կողմից: Ներկայացված դիմումներից մեկը Ընտրական օրենսգրքի 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխան՝ գրությամբ վերադարձվել է դիմումատուներին, իսկ մնացած չորս դիմումները Կենտրոնական ընտրական հանձնաժողովը քննարկել է սահմանված կարգով և ժամկետներում:

Քվեարկության օրվանից հետո թվով 10 տարածքային ընտրական հանձնաժողովներում ստացվել է ընդհանուր առմամբ թվով 19 դիմում-բողոք՝ բացառապես՝ դիտորդական առաքելություն իրականացրած մեկ հասարակական կազմակերպության և նրա դիմումով հավատարմագրված դիտորդների կողմից, որոնց ուսումնասիրությամբ տարածքային ընտրական հանձնաժողովները կայացրել են թվով 19 որոշումներ: Վարչական վարույթի հարուցումը մերժելու մասին որոշում ընդունելու դեպքում, ըստ անհրաժեշտության, տարածքային ընտրական հանձնաժողովները դիմումներում ներկայացված հանգամանքները գնահատել են որպես հաղորդումներ, սեփական նախաձեռնությամբ հարուցել են վարչական վարույթներ և կայացրել թվով 6 որոշումներ:

Տարածքային ընտրական հանձնաժողովներն իրենց կողմից ընդունված որոշումներով միջնորդել են Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել այն տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահների (քարտուղարների, անդամների)՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները, ովքեր թույլ են տվել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի պահանջների առանձին խախտումներ:

Ընդհանուր առմամբ ներկայացվել է միջնորդություն՝ թվով 10 տեղամասային ընտրական հանձնաժողովների թվով 19 նախագահների և/կամ քարտուղարների և/կամ անդամների վերաբերյալ, որոնք բոլորը բավարարվել են:

Երևանի ավագանու 2017 թվականի մայիսի 14-ի ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչական դատարան է ներկայացվել երկու հայցադիմում, իսկ ընտրությունների քվեարկության օրվանից հետո վարչական դատարան է ներկայացվել մոտ 20 հայցադիմում դիտորդական առաքելություն իրականացրած մեկ տեղական հասարակական կազմակերպության և նրա կողմից հավատարմագրված դիտորդների կողմից, որոնցով վիճարվել են ընտրական հանձաժողովների վարչական ակտերը:

Երևանի ավագանու ընտրությունների ժամանակ ևս առկա չէ որևէ դատական ակտ, որով փաստվել է անձանց ընտրական իրավունքների խախտում:

Ընտրական օրենսգրքի 67-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն՝եթե հանձնաժողովի անդամը, վստահված անձը կամ դիտորդը գտնում է, որ քվեարկության ընթացքում տեղի է ունեցել օրենսգրքով նախատեսված քվեարկության կարգի խախտում, ապա իրավունք ունեն պահանջելու, որ իրենց գնահատականն արձանագրվի տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանում:

Միայն 136 (կամ ընդհանուր տեղամասերի թվի 28.7%-ում) տեղամասային ընտ-րական հանձնաժողովների գրանցամատյաններում են կատարվել թվով 222 գրառում, իսկ թվով 338 տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում առկա չէ:

Թվով 474 ընտրական տեղամասերից միայն 3 ընտրական տեղամասերի (0.6%) քվեարկության արդյունքների արձանագրություններում է առկա նշում հատուկ կարծիք ունենալու մասին: Ուշագրավ է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովների ընդհանուր թվով 3778 անդամներից միայն 3-ն (0.07%) են ներկայացրել հատուկ կարծիք:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ - 2017Թ.

Ընտրական օրենսգրքի 120-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն «Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրություններ կարող են անցկացվել տարին մինչև չորս անգամ: Համայնքի ղեկավարի և ավագանու անդամի հերթական ընտրությունների քվեարկության օրերը յուրաքանչյուր տարվա համար սահմանում է Կենտրոնական ընտրական հանձնաժողովը»: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը 2016 թվականի սեպտեմբերի 29-ի թիվ 59-Ա որոշմամբ 2017 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների քվեարկության օրեր է սահմանել 2017 թվականի փետրվարի 12-ը, 2017 թվականի հունիսի 18-ը, 2017 թվականի նոյեմբերի 5-ը:

2017 թվականի ընթացքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ են անցկացվել 90 համայնքներում, որոնցից 5-ում արտահերթ:

Նշված համայնքներից 68-ում տեղի են ունեցել համայնքի ղեկավարի, իսկ 59-ում՝ ավագանու անդամի ընտրություններ: Նշված համայնքներից 19-ը հանդիսացել են քաղաքային համայնքներ, իսկ 34 համայնքներում ընտրությունները տեղի են ունեցել համայնքների խոշորացման արդյունքում: Հարկ է նկատել, որ թվով 34 խոշորացված համայնքներն ընդգրկել են 324 բնակավայրեր կամ նախկինում ինքնուրույն համայնքներ: Ընտրությունների կազմակերպման առումով հարկ է նկատել, որ ընտրական գործընթացը կազմակերպվել է 380 բնակավայրերում կամ նախկին համայնքներում: Այդ ընտրությունները կազմակերպելու նպատակով կազմավորվել են ընդհանուր թվով 554 ընտրական տեղամասեր, որոնցում ընդգրկված ընտրողների թիվը կազմել է 512.686, իսկ քվեարկությանը մասնակցել են 257.378-ը:

2017 թվականի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին առաջադրվել են համայնքի ղեկավարի և ավագանու անդամի 1226 թեկնածուներ: Որևէ թեկնածուի գրանցում չի մերժվել տարածքային ընտրական հանձնաժողովների կողմից: Ինքնաբացարկ են ներկայացրել 77 թեկնածուներ և քվեարկություններին մասնակցել են 1125 թեկնածուներ:

2017 թվականի փետրվարի 12-ի տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրությունների ժամանակ երկու համայնքներում՝ Գեղարքունիքի մարզի Սեմյոնովկա և Արմավիրի մարզի Վարդանաշեն, առաջին անգամ փորձարկվել է ընտրողների էլեկտրոնային գրանցումն իրականացնող սարքավորումների աշխատանքը, իսկ 2017 թվականին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների մյուս ընտրությունների ժամանակ ամբողջ ծավալով կիրառվել են նշված սարքավորումները: Հարկ է նկատել, որ 2017 թվականի նոյեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ, որը ընդգրկում էր 356 բնակավայրեր՝ տեխնիկական սարքավորումները կիրառվեցին և սպասարկվեցին բացառապես տեղական մասնագետների կողմից, առանց օտարերկրյա մասնագետների և փորձագետների աջակցության ու արձանագրվեցին եզակի թերություններ:

2017 թվականի փետրվարի 12-ի և հունիսի 18-ի ընտրությունների ժամանակ, որևէ դիմում բողոք չի ներկայացվել, տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում որևէ գրառում չի կատարվել: Նոյեմբերի 5-ին տեղի ունեցած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ ներկայացվել է 22 դիմում, թվով՝ 24 տեղամասերում քվեարկության արդյունքների վերահաշվարկ կատարելու մասին: Նշված դիմումների հիմքով վերահաշվարկ է իրականացվել թվով 16 տեղամասերում, իսկ վերահաշվարկի իրականացումը մերժվել է բացառապես այն դեպքերում, երբ դիմումը ներկայացված չի եղել իրավասու սուբյեկտի կողմից: Վերահաշվարկների արդյունքում որևէ էական փոփոխություն չի արձանագրվել:

Վերահաշվարկ իրականացված տեղամասերի ցանկը՝

Տարածքային ընտրական հանձնաժողով	Համայնք	Տեղամաս N	Ընտրություն
17	Ծաղկահովիտ	17/41	հ.ղ.
21	Վարդենիս	21/13	ա.ա.
24	Շնող	24/33	ա.ա.
25	Լոռի Բերդ	25/3	ա.ա.
25	Օձուն	25/50	հ.ղ.
25	Օձուն	25/52	հ.ղ.
25	Օձուն	25/53	հ.ղ.
25	Օձուն	25/56	հ.ղ.
25	Օձուն	25/57	հ.ղ.
25	Օձուն	25/58	հ.ղ.
25	Օձուն	25/59	հ.ղ.
25	Օձուն	25/53	ա.ա.
26	Մեղրաձոր	26/5	ա.ա.
26	Մեղրաձոր	26/6	ա.ա.
29	Ջրվեժ	29/2	ա.ա.
37	Աչաջուր	37/3	հ.ղ.

Ընտրության արդյունքների վիճարկման վերաբերյալ դիմում չի ներկայացվել տարածքային ընտրական հանձնաժողովներ, ինչպես նաև տեղական ինքնակառավարման մարմինների որևէ ընտրության արդյունք չի վիճարկվել դատական կարգով:

Տեխնիկական սարքավորումների կիրառում

2017 թվականի հունիսի 18-ի և նոյեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները կազմակերպվեցին և անցկացվեցին 2016 թվականի մայիսի 25-ի Ընտրական օրենսգրքի կանոնակարգումներին համապատասխան՝ տեխնիկական սարքավորումների գործածմամբ:

Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի հունիսի 18-ի ընտրությունների ժամանակ թվով 15 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գործարկվեցին 24 տեխնիկական սարքավորումներ: 6 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են 1-ական տեխնիկական սարքավորում, 9-ում՝ 2 տեխնիկական սարքավորում: Գործածված թվով 24 տեխնիկական սարքավորումներից ընդամենը 2 տեխնիկական սարքավորման գործարկման հետ կապված խնդիրներ են ծագել, որոնք անմիջապես լուծում են ստացել:

Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի նոյեմբերի 5-ի ընտրությունների ժամանակ կազմավորված 527 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գործարկվել են ընդհանուր թվով 843 տեխնիկական սարքավորում:

Թվով 71 տեղամասային ընտրական հանձնաժողովներում օգտագործվել են 3 տեխնիկական սարքավորում, 174-ում օգտագործվել են 2 տեխնիկական սարքավորում, 282-ում՝ 1 տեխնիկական սարքավորում:

Տեղական ինքնակառավարման մարմինների 2017 թվականի հունիսի 18-ի և նոյեմբերի 5-ի ընտրությունների ժամանակ տեխնիկական սարքավորումների մեջ ներբեռնվող՝ էլեկտրոնային եղանակով կազմված ընտրողների ցուցակները լիազոր մարմնի կողմից Կենտրոնական ընտրական հանձնաժողովին է տրամադրվել քվեարկության օրվանից 5 օր առաջ: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը կազմակերպել է ընտրողների էլեկտրոնային ցուցակների ներբեռնումը տեխնիկական սարքավորումների հիշողության կրիչների վրա և պատահական ընտրանքի սկզբունքով իրականացրել է այդ կրիչներում առկա տեղեկատվության ստուգումը:

2017 թվականի նոյեմբերի 5-ի ընտրություններին 527 տեղամասային ընտրական հանձնաժողովներում գործածված թվով 843 տեխնիկական սարքավորումներից խնդիրներ են ծագել ընդամենը 13 տեխնիկական սարքավորման գործարկման հետ կապված: Մասնավորապես, տեխնիկական պատճառով խափանվել և նորերով են փոխարինվել ընդամենը՝ 6 տեխնիկական սարքավորում: Թվով 7 տեխնիկական սարքավորման պարագայում ծագած խնդիրներն անհապաղ լուծում են ստացել և միայն 1 դեպքում է, որ տեխնիկական սարքավորումներն անջատվել են և այդ տեղամասերում աշխատանքը շարունակվել է 2 սարքավորմամբ: Բացի թվարկված խնդիրներից, գրանցվել են առանձին խնդիրներ, որոնք անմիջապես լուծում են ստացել:

Արդյունքում, 2017 թվականի հունիսի 18-ի և նոյեմբերի 5-ի տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում ընտրողների գրանցումն իրականացվել է տեխնիկական սարքավորումների միջոցով և քվեարկության ավարտից հետո բոլոր տեղամասային ընտրական հանձնաժողովներում տպվել է տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված ընտրողների վերաբերյալ՝ Ընտրական օրենսգրքի 68-րդ հոդվածով սահմանված տեղեկանքը:

2017Թ. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄԱՐԶ	համայնք ների թիվը	ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ				ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ			
		Ընդամենը	որից՝			Ընդամենը	որից՝		
			արտա-հերթ	քաղաք. համայնք	10000 և ավելի		արտա-հերթ	քաղաք. համայնք	10000 և ավելի
Արագածոտն	16	8	1	1	0	13	0	1	0
Արարատ	11	11	1	2	2	1	0	0	0
Արմավիր	3	3	0	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	18	7	0	2	1	16	0	2	1
Լոռի	13	12	1	4	2	11	0	4	2
Կոտայք	9	9	0	4	2	6	0	3	2
Շիրակ	8	8	1	1	0	3	0	1	0
Սյունիք	5	5	1	4	3	3	0	3	2
Վայոց ձոր	3	3	0	0	0	3	0	0	0
Տավուշ	4	2	0	1	0	3	0	1	0
Ընդամենը	**90**	**68**	**5**	**19**	**10**	**59**	**0**	**15**	**7**

որից՝

Հերթական ընտրությունների օրերը	համայնքների թիվը	համայնքի ղեկավար			ավագանու անդամի		
		ընդ.	որից՝ արտա-հերթ	քաղաք. համայնք	ընդ.	որից՝ արտա-հերթ	քաղաք. համայնք
12.02.2017	10	6	1	0	3	0	0
26.03.2017	1[1]	1	0	0	0	0	0
18.06.2017	11	9	1	1	1	0	0
25.06.2017	1[1]	0	0	0	1	0	0
05.11.2017	69	52	3	18	54	0	15
Ընդամենը	90	68	5	19	59	0	15



[1] Անցկացվել է նոր ընտրություն հերթական ընտրությունը չկայացած ճանաչվելու պատճառով

Տեղեկատվություն 2017թ. կազմավորված տեղամասերի, ընտրողների թվի և քվեարկության մասնակիցների վերաբերյալ

Մարզ	համայնքների թիվը, որտեղ կայացել են ընտրություններ	կազմավորված տեղամասերի թիվը	Ընտրողների թիվը	քվեարկության մասնակիցների թիվ	%
Արագածոտն	16	66	46519	23576	50.68
Արարատ	11	33	57320	19152	33.41
Արմավիր	3	3	3646	2108	57.82
Գեղարքունիք	18	66	47858	25053	52.35
Լոռի	13	102	87438	40110	45.87
Կոտայք	9	65	90578	44323	48.93
Շիրակ	8	52	42627	23454	55.02
Սյունիք	5	116	86704	48934	56.44
Վայոց ձոր	3	24	18528	13392	72.28
Տավուշ	4	27	31468	17276	54.90
Ընդամենը	**90**	**554**	**512686**	**257378**	**50.20**





2017Թ. ԽՈՇՈՐԱՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՈՒՄ ԿԱՅԱՑԱԾ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մարզ	խոշորացման արդյունքում ստեղծված համայնքերի թիվը	խոշորացված համայնքերի թիվը
Արագածոտն	4	46
Արարատ	0	0
Արմավիր	0	0
Գեղարքունիք	4	38
Լոռի	10	61
Կոտայք	6	31
Շիրակ	3	40
Սյունիք	3	67
Վայոց ձոր	3	25
Տավուշ	1	16
Ընդամենը	**34**	**324**

2017թ. տեղական ինքնակառավարման մարմինների հերթական, արտահերթ և նոր ընտրություններ



ՀՀ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՆ 01.12.2017Թ. ԴՐՈՒԹՅԱՄԲ

Մարզ	համայնքների թիվը	խոշորացման արդյունքում ստեղծված համայնքների թիվը	խոշորացված համայնքների թիվը
Արագածոտն	72	4	46
Արարատ	95	1	3
Արմավիր	97	0	0
Գեղարքունիք	57	4	38
Լոռի	56	11	68
Կոտայք	42	6	31
Շիրակ	42	7	84
Սյունիք	8	8	109
Վայոց ձոր	8	6	42
Տավուշ	24	5	43
Ընդամենը	**501**	**52**	**464**

Խոշորացման արդյունքում ՀՀ համայնքների թիվը նվազել է 50.82%-ով



Տեղեկատվություն թեկնածուների վերաբերյալ

Մարզ	Առաջադրված թեկնածուներ	ինքնաբացարկ	մերժված	քվ. մասն. թեկնածուներ	Ընտրված
Արագածոտն	205	8	0	190	109
Արարատ	30	8	0	20	16
Արմավիր	8	2	0	6	3
Գեղարքունիք	232	19	0	209	131
Լոռի	233	12	0	221	137
Կոտայք	158	8	0	143	83
Շիրակ	116	5	0	110	49
Սյունիք	105	9	0	93	46
Վայոց ձոր	70	3	0	67	36
Տավուշ	69	3	0	66	31
Ընդամենը	**1226**	**77**	**0**	**1125**	**641**

Մրցակցությունն ըստ մարզերի



ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Մարզ	առաջադր-ված	ինքնաբա-ցարկ	մերժված	քվ. մասն. թեկնածու-ներ	ընտրված
Արագածոտն	24	5	0	18	8
Արարատ	24	8	0	14	11
Արմավիր	8	2	0	6	3
Գեղարքունիք	22	8	0	12	7
Լոռի	32	9	0	23	12
Կոտայք	25	7	0	13	9
Շիրակ	29	4	0	24	8
Սյունիք	16	6	0	8	5
Վայոց ձոր	9	0	0	9	3
Տավուշ	8	0	0	8	2
Ընդամենը	**197**	**49**	**0**	**135**	**68**



ԸՍՏ ՔՎԵԱԹԵՐԹԻԿՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐՎԱԾ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԹՎԻ

Մարզ	քվեաթերթիկում ընդգրված թեկնածուների քանակը					
	1 թեկնածու	2 թեկնածու	3 թեկնածու	4 թեկնածու	5 թեկնածու	6 թեկնածու
Արագածոտն	4	1	2	0	0	1
Արարատ	8	3	0	0	0	0
Արմավիր	1	1	1	0	0	0
Գեղարքունիք	2	5	0	0	0	0
Լոռի	6	2	3	1	0	0
Կոտայք	5	4	0	0	0	0
Շիրակ	2	2	1	1	1	1
Սյունիք	3	2	0	0	0	0
Վայոց ձոր	0	1	1	1	0	0
Տավուշ	0	0	0	2	0	0
Ընդամենը	**31**	**21**	**8**	**5**	**1**	**2**





ՀԱՄԱՅՆՔԻ ՎԵՐԸՆՏՐՎԱԾ ՂԵԿԱՎԱՐՆԵՐ

Մարզ	ընդամենը համայնք	քվ. մասն. թեկնածուներ	վերընտրվել են	չեն վերընտրվել	չեն առաջադրվել	
Արագածոտն[2]	8	18	5	5	2	*Սաղմոսավան արտահերթ,* Ապարան
Արարատ	11	14	9	1	1	*Արտաշատ արտահերթ*
Արմավիր	3	6	3	0	0	
Գեղարքունիք[2]	7	12	4	4	0	
Լոռի[2]	12	23	10	3	2	Ալավերդի, *Շիրակամուտ արտահերթ*
Կոտայք	9	13	9	0	0	
Շիրակ[2]	8	24	5	5	1	Արևիկ
Սյունիք	5	8	3	0	2	*Գորիս արտահերթ,* Վարդավանք
Վայոց ձոր[2]	3	9	3	4	0	
Տավուշ[2]	2	8	1	3	0	
Ընդամենը	**68**	**135**	**52**	**25**	**8**	



[2] **Խոշորացման արդյունքում ստեղծվող որոշ համայնքներում առաջադրվել են մի քանի գործող ղեկավարներ՝**

- ✓ Արագածոտն մարզի Ալագյազ համայնքում՝ Ալագյազ, Միրաք, Ռյա թազա, Կանիաշիր և Ծաղկահովիտ համայնքում՝ Ծաղկահովիտ, Հնաբերդ,
- ✓ Գեղարքունիք մարզի Շողակաթ համայնքում՝ Շողակաթ, Դրախտիկ, Գեղամասար համայնքում՝ Շատջրեք,
- ✓ Լոռի մարզի Ախթալա համայնքում՝ Ախթալա և Ճոճկան , Գյուլագարակ համայնքում՝ Գյուլագարակ և Կուրթան, Մեծավան համայնքում՝ Միխայելովկա և Մեծավան ,
- ✓ Շիրակ մարզի Ախուրյան համայնքում՝ Բասեն, Ախուրյան և Մարմարաշեն համայնքում՝ Մարմարաշեն, Քեթի, Մայիսյան,
- ✓ Վայոց ձոր մարզի Արենի համայնքում՝ Ռինդ, Արենի, Արփի և Եղեգեիս համայնքում՝ Արտաբույնք, Շատին, Քարագլուխ,
- ✓ Տավուշ մարզի Բերդ համայնքում՝ Բերդ, Արծվաբերդ, Այգեձոր համայնքների ղեկավարները

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Մարզ	առաջադրված	ինքնաբացարկ	մերժված	քվ. մասն. թեկնածուներ	ընտրված
Արագածոտն	181	3	0	172	101
Արարատ	6	0	0	6	5
Արմավիր	0	0	0	0	0
Գեղարքունիք	210	11	0	197	124
Լոռի	201	3	0	198	125
Կոտայք	133	1	0	130	74
Շիրակ	87	1	0	86	41
Սյունիք	89	3	0	85	41
Վայոց ձոր	61	3	0	58	33
Տավուշ	61	3	0	58	29
Ընդամենը	**1029**	**28**	**0**	**990**	**573**



ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՆ ԸՍՏ ԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ ՊԱՏԿԱՆԵԼՈՒԹՅԱՆ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Կուսակցության անվանումը	առաջադրված	ինքնաբացարկ	քվ. մասն. թեկնածուներ	որից՝ ինքնաառաջադրումով	ընտրված	որից՝ ինքնաառաջադրումով
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ	90	33	49	47	14	12
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	0	7	3	2	2
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	1	0	0	0	0
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	1	6	5	3	2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	91	13	73	26	49	11
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	1	0	0	0	0
Ընդամնեը	**197**	**49**	**135**	**81**	**68**	**27**



ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Կուսակցության անվանումը	առաջադրված	ինքնաբացարկ	քվ. մասն. թեկնածուներ	որից՝ ինքնաառաջադրումով	ընտրված	որից՝ ինքնաառաջադրումով
ԱՆԿՈՒՍԱԿՑԱԿԱՆ	678	20	651	571	378	325
ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	0	0	0
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	31	2	28	28	12	12
ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	0	2	0	0	0
ՀԱՄԵՐԱՇԽՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0	0	0	0	0	0
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	51	2	48	39	23	17
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ ԱԶԱՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	1	1	1
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	251	4	245	143	155	85
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	7	0	7	6	2	1
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	1	0	0
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	0	0	0
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՄԻՈՒԹՅՈՒՆԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	1	1	1
ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ՀՆՉԱԿՅԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	0	2	2	1	1
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	0	2	1	0	0
Ընդամենը	**1029**	**28**	**990**	**793**	**573**	**443**

ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՄԱՆ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Կուսակցության անվանումը	առաջադրված	ինքնաբացարկ	քվ. մասն. թեկնածուներ	որից՝ անկուսակցական	ընտրված	որից՝ անկուսակցական
ԻՆՔՆԱԱՌԱՋԱԴՐՈՒՄ	141	47	81	47	27	12
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	6	1	5	1	1	1
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	0	1	0
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	49	1	48	1	39	1
Ընդամենը	**197**	**49**	**135**	**49**	**68**	**14**

Ավագանու անդամի թեկնածուներ

Կուսակցության անվանումը	առաջադրված	ինքնաբացարկ	քվ. մասն. թեկնածուներ	որից՝ անկուսակցական	ընտրված	որից՝ անկուսակցական
ԻՆՔՆԱԱՌԱՋԱԴՐՈՒՄ	828	25	793	571	443	325
ԲԱՐԳԱՎԱՃ ՀԱՅԱՍՏԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	0	0	0	0	0	0
ԵՐԿԻՐ ԾԻՐԱՆԻ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	2	0	2	0	0	0
ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	11	0	11	2	8	2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	185	3	181	78	121	51
ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	0	1	0
ՌԱՄԿԱՎԱՐ ԱԶԱՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	0	0	0
ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ	1	0	1	0	0	0
Ընդամենը	**1029**	**28**	**990**	**651**	**573**	**378**

Քվեարկությանը մասնակցած թեկնածուներն ըստ առաջադրումների



Ընտրված թեկնածուներն ըստ առաջադրումների



ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՆ ԸՍՏ ՍԵՌԻ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Մարզ	առաջադրված		ինքնաբացարկ		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	24	0	5	0	18	0	8	0
Արարատ	24	0	8	0	14	0	11	0
Արմավիր	8	0	2	0	6	0	3	0
Գեղարքունիք	20	2	8	0	10	2	6	1
Լոռի	31	1	9	0	22	1	12	0
Կոտայք	23	2	7	0	11	2	9	0
Շիրակ	27	2	3	1	23	1	8	0
Սյունիք	15	1	6	0	7	1	4	1
Վայոց ձոր	9	0	0	0	9	0	3	0
Տավուշ	8	0	0	0	8	0	2	0
Ընդամենը	**189**	**8**	**48**	**1**	**128**	**7**	**66**	**2**



ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐ

Մարզ	առաջադրված		ինքնաբացարկ		քվ. մասն.		ընտրված	
	արական	իգական	արական	իգական	արական	իգական	արական	իգական
Արագածոտն	178	3	3	0	169	3	101	0
Արարատ	6	0	0	0	6	0	5	0
Արմավիր	0	0	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	200	10	11	0	187	10	118	6
Լոռի	179	22	3	0	176	22	113	12
Կոտայք	128	5	0	1	126	4	72	2
Շիրակ	87	0	1	0	86	0	41	0
Սյունիք	83	6	3	0	79	6	37	4
Վայոց ձոր	60	1	3	0	57	1	32	1
Տավուշ	55	6	3	0	52	6	27	2
Ընդամենը	**976**	**53**	**27**	**1**	**938**	**52**	**546**	**27**



ԸՍՏ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ՏԱՐԻՔԻ

Համայնքի ղեկավարի թեկնածուներ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	5	3	9	3	4	2
Արարատ	3	3	9	7	2	1
Արմավիր	4	2	2	1	0	0
Գեղարքունիք	1	1	8	5	3	1
Լոռի	7	4	13	6	3	2
Կոտայք	1	0	10	7	2	2
Շիրակ	7	2	16	6	1	0
Սյունիք	4	3	2	2	2	0
Վայոց ձոր	3	1	6	2	0	0
Տավուշ	3	1	4	1	1	0
Ընդամենը	38	20	79	40	18	8



Ավագանու անդամի թեկնածուներ

Մարզ	մինչև 40	որից՝ ընտրված	40-60	որից՝ ընտրված	60 և ավելի	որից՝ ընտրված
Արագածոտն	87	56	73	40	12	5
Արարատ	4	4	2	1	0	0
Արմավիր	0	0	0	0	0	0
Գեղարքունիք	108	68	74	49	15	7
Լոռի	76	52	105	68	17	5
Կոտայք	71	41	49	27	10	6
Շիրակ	46	25	27	13	13	3
Սյունիք	48	26	34	14	3	1
Վայոց ձոր	18	13	37	19	3	1
Տավուշ	18	14	35	14	5	1
Ընդամենը	476	299	436	245	78	29